Azg
Ազգ
13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2005 ՀԻՆԳՇԱԲԹԻ 184 (3350)

Ինքնասպան է եղել Սիրիայի ներքին գործերի նախարարը

Սիրիական պաշտոնական Սանա լրատվական գործակալությունը երեկ երեկոյան հաղորդեց, որ իր գրասենյակում ատրճանակով ինքնասպանություն է գործել ներքին գործերի նախարար գեն. Ղազի Քանաանը: Լուրը ռումբի տպավորություն գործեց միջազգային շրջանակներում: Բանն այն է, որ Ղազի Քանաանը 1982 թ.-ից մինչեւ 2002 թ. ծառայել է Լիբանանում որպես սիրիական գաղտնի ծառայությունների եւ անվտանգության ուժերի պետ: Նա շուրջ մեկ ամիս առաջ հարցաքննվել է ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովի կողմից Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով:

Սպանության լուրի հրապարակումից ընդամենը 1,5 ժամ առաջ Ղազի Քանաանը զանգահարել է լիբանանյան քրիստոնյա (հակասիրիական) «Լիբանանի ձայն» ռադիոկայանի թղթակցին ու հայտնել, թե ինքը միշտ էլ եղել է Լիբանանի ժողովրդի բարեկամ: Նա ասել է, որ սա իր վերջին հայտարարությունն է լինելու:

Ղազի Քանաանը 63 տարեկան էր, պատկանում էր Սիրիայում իշխող ազգային փոքրամասնության՝ ալաուիթ համայնքին: Տիկինը հայ է:

Միլիարդանոց բյուջե

ԱԺ հանձնաժողովներում սկսվեցին 2006 թ. բյուջետային քննարկումները

ՄԱՐԻԵՏԱ ԽՈՒՉԱՏՅԱՆ

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ու ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը երկրի 2006 թ. բյուջեն անվանեցին սոցիալական՝ վերջին մի քանի տարիների բյուջեների նման, քանի որ նրա ուղղվածությունն առաջվա նման սոցիալական է: Մենք էլ մեր կողմից անվանենք միլիարդանոց բյուջե, քանի որ հասել է 1 մլրդ դոլարի սահմանագիծը:

2006 թ. բյուջեի նախագծի ծախսային մասը կազմում է 451,9 մլրդ դրամ եւ 55,6 մլրդ դրամով ավելի է նախորդ բյուջեի ծախսային գումարից: Հավելաճն ուղղվելու է հիմնականում սոցիալական, պետական կառավարման ոլորտներում իրականացվող ծրագրերի եւ բարեփոխումների ֆինանսական ապահովմանը, երկրի անվտանգության եւ պաշտպանության համակարգին, տնտեսության առանձին ոլորտներում ենթակառուցվածքների պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների պետական աջակցությանը:

Կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության ոլորտների ընդհանուր գումարը կազմելու է ծրագրված բյուջետային ծախսերի 36,1 տոկոսը: Պետության անվտանգության եւ պաշտպանության ապահովման, ինչպես նաեւ հասարակական կարգի պահպանման գումարը նույնպես մեծ է՝ ծախսերի 23,4 տոկոսը: Տնտեսական խնդիրները կապահովվեն 17,3 տոկոս ծախսով, արտաքին քաղաքական գործունեության եւ տնտեսական աջակցության համար նախատեսված է 5 տոկոս:

Բյուջեի դեֆիցիտը ծրագրված է ՀՆԱ-ի 2,9 տոկոսի չափով եւ կազմում է 69,9 մլրդ դրամ (անցած տարի 47,5 մլրդ դրամ էր): Դեֆիցիտը ֆինանսավորվելու է հիմնականում արտաքին աղբյուրներից (52,2 տոկոս):

Պետական պարտքի ընդհանուր մակարդակը 2006 թ. վերջում կանխատեսվում է 1 մլրդ 411 մլն ԱՄՆ դոլարից մի փոքր ավելի կամ ՀՆԱ-ի 27,5 տոկոսը: Պարտքի 91 տոկոսը (1 մլրդ 285 մլն դոլար) բաժին է ընկնում արտաքին պարտքին միայն:

2006 թ.-ին պետական բյուջեի ռիսկերը Ե՛ւ ներքին, Ե՛ւ արտաքին են: Ներքին ռիսկերը հաշվարկված են եւ հիմնականում ապահովվելու են հարկային եւ մաքսային եկամուտների հաշվին, չնայած, այնուամենայնիվ, այդ ռիսկերը կապված են մաքսային եւ հարկային այդ պահին իրականացված հաջող հավաքումներից: Ներքին ռիսկերի այն մասը, որը կախված է տնտեսական եւ քաղաքական զարգացումներից, արտաքին գործոնների ազդեցությունից, հաշվարկված չէ. «Եթե ներքին քաղաքականության մեջ փոփոխություն լինի, դրանից հետո կարող է բյուջեն կատարվի կամ չկատարվի՝ չգիտեմ, գնահատված չէ», նկատեց Վ. Խաչատրյանը:

Բյուջեն հաշվարկված է այսօրվա գներով, դոլարի կուրսը՝ 468 դրամով: Հաշվարկման պահին մյուս տարվա համար դոլարի համարժեքի վերաբերյալ Կենտրոնական բանկի կանխատեսումները չեն եղել: «Մենք մեր մեթոդներով ենք հաշվել, վերջին 7 ամսվա միջինով: Եթե փոփոխություն լինի՝ կվերահաշվարկենք այլ փոխարժեքով», լրագրողներին տեղեկացրեց Վ. Խաչատրյանը, ապա ոտքերձ արեց.

«Ասե՛ք առաջին տարին միլիարդի շեմն անցանք, Ասված տա, մի-երկու տարի հետո 2 միլիարդին հասնենք»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագահ Քոչարյանը կայցելի Բրյուսել

Նախագահ Քոչարյանը երեկ ընդունել է Հայաստանում հավատարմագրված Եվրամիության անդամ երկրների դեսպաններին եւ Եվրահանձնաժողովի պատվիրակության ներկայացուցչին: Ըստ նախագահի մամլո քարտուղարի հաղորդագրության, հաջորդ շաբաթ նախատեսվում է Ռոբերտ Քոչարյանի այցը Բրյուսել եւ եվրոպական կառույցներ, որի ընթացքում հանդիպումների նախագահը մտադիր է քննարկել համագործակցության հեռանկարները, մասնավորապես եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակում անհատական գործողությունների ծրագրի հետ կապված հարցեր: Քոչարյանը նշել է, որ եվրոպական հարեւանության քաղաքականությունը որակական նոր մակարդակ կհաղորդի Հայաստան-ԵՄ հարաբերություններին:

Ժողովուրդն է ընտրել, նրան էլ հարցրեք

Էլցանցերի Նոր Հաճընի մասնաճյուղի տնօրենին գնդակահարած եւ օրերս քաղաքից վերընտրված Արմեն Քեշիշյանի թեմային անդրադառնալով՝ երեկ վարչապետ Ա. Մարգարյանը նկատել է, թե ժողովուրդը երեւի այդպիսի ընտրություն է կատարել թեկնածուների հարաբերությունները տեսնելով. «Վստահ եմ, որ ընտրված քաղաքացին երկար չի աշխատի, կլինի դատարանի որոշումը եւ կրկնակի ընտրություններ կլինեն», ասաց վարչապետը: Երեւույթի գնահատականը տալու հարցին վարչապետն այսպես արձագանքեց. «Ժողովրդի տե՛ղն էլ պատասխանեմ, ինքն է ընտրել: Գուցե որոշակի նկատառումներով ակցիա են արել Արմենի դեմ, իրենց պետք է հարցնեք: Ժողովուրդն ընտրում է, ասում եմ՝ հակաժողովրդական է, չի ընտրում, ասում եմ՝ հակաժողովրդական է»:

Մ. Խ.

Ավանդները կվերադարձվեն նպաստառու ընտանիքներին

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանը պարզաբանեց փոխհատուցման սկզբունքը

Ազգային ժողովի հանձնաժողովներում երեկ սկսված բյուջետային քննարկումների ինտրիգն այն էր, որ պետք է պատասխաններ հետեւյալ հարցին՝ արդյոք ավանդների փոխհատուցումը նախատեսող տող երկրի պետական բյուջեի նախագծում լինելո՞ւ է: Այդ հարցին անդրադարձավ երկրի վարչապետը Ե՛ւ հանձնաժողովների միացյալ նիստի ժամանակ, Ե՛ւ լրագրողների հարցերին պատասխանելով:

Ըստ Անդրանիկ Մարգարյանի՝ ավանդների վերադարձման գումար կառանձնացվի աղքատության կրճատման ռազմավարական ծրագրում նախատեսված գումարից (14,7 մլրդ), 1 մլրդ դրամի շրջանակներում նպաստառու ավանդատուների համար:

Ընտրվել է հետեւյալ սկզբունքը. առաջին 1000 խորհրդային ռուբլու դիմաց նախատեսվում է վճարել 200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Սա կլինի բազային գումարը, որին կգումարվեն հետագա հազարների արդեն նվազող տոկոսներով փոխհատուցումները. 1 հազարից 3 հազար ռուբլու դիմաց 200 դոլարին գումարվում է այդ թվի 70 տոկոսը, 3-5 հազարի համար՝ բազային գումարի 40 տոկոսը, 5-10 հազարի դեպքում՝ բազային գումարին գումարվում է 20 տոկոսը, 10 հազարից ավելիի համար գումարվում է 10 տոկոսը:



Տես էջ 2

Օսկանյանն այսօր կլինի Սինգապուրում

Հարավ-արեւելյան Ասիայի եւ Խաղաղ օվկիանոսի երկրներ պատշգամբ կոչվող այցերի շրջանակում արտգործնախարար Վարդան Օսկանյանը երեկ Ավստրալիայից մեկնել է Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտա, հանդիպելու երկրի փոխնախագահի եւ արտգործնախարարի հետ: Սա, ի դեպ, հայ բարձրաստիճան պատվիրակության առաջին պաշտոնական այցն է Ինդոնեզիա:

Երկկողմ հարաբերությունների զարգացման առնչությամբ քննարկումներից զատ, խոսվել է տնտեսության ոլորտում կոնկրետ ծրագրերի իրականացման հնարավորությունների մասին: Արտգործնախարարները տեղեկություններ են փոխանակել Աչեի եւ ԼՂ հակամարտությունների մասին:

Ելնելով ԱԳՆ մամուլի ծառայության հաղորդագրությունից, ընդհանուր առմամբ Օսկանյանի այցը ճանաչողական էր, կողմերը ծանոթանում են երկրներին, երկու տարածաշրջանների խնդիրներին: Այսօր Օսկանյանը կլինի Սինգապուրում, կհանդիպի երկրի արտգործնախարարի հետ:

Հակահայկական թռուցիկներ Ջավախքում

«Ռեգնում» գործակալությունը հաղորդում է, որ հոկտեմբերի լույս 12-ի գիշերը Ախալքալաքում անհայտ անձինք շենքերի պատերին փակցրել են ռուսերենով տպագրված թռուցիկներ, որոնք ստորագրել է այսպես կոչված «Ախալցխայի ազատագրման բրիգադ» մինչ օրս անհայտ կազմակերպությունը: Թռուցիկներում ջավախահայությանը հրամայվում է անհապաղ դատարկել շրջանը եւ գնալ Հայաստան, Ռուսաստան, Ամերիկա: «Հակառակ դեպքում դուք կենթարկվեք կոտորածի, ինչպես եղավ ձեր նախնիների հետ 1915 թ.», ասվում է թռուցիկներում:

Խեղդվել է Սեւանա լճում

Արտակարգ իրավիճակների վարչության լրատվական կենտրոնից տեղեկացանք, որ հոկտեմբերի 10-ին, ժամը 20-ին Սեւանա լճում խեղդվել է Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի բնակիչ, 1956 թ. ծնված Լ. Մարգարյանը, որի դիակը ջրից հանել են համագյուղացիները: Մ. Մ.

Ամերիկյան կողմը հետաքրքրված է Իրան-Հայաստան գազամուղով

Մ. Նահանգների էներգետիկայի քարտուղար Սեմուել Բոդմանը Հայաստանի էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանի հետ հանդիպման ընթացքում նշել է, որ ամերիկյան կողմը հետաքրքրվում է Հայաստան-Իրան գազամուղի կառուցման վիճակով: Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպման ընթացքում, ըստ ՀՀ ԱԳՆ մամլո հաղորդագրության, Մովսիսյանը նշել է, որ Հայաստանի ատոմակայանի անվտանգությունն ապահովելու, ինչպես նաեւ Հայաստանում այլընտրանքային էներգետիկայի զարգացման խնդիրներում Երեւանն ակնկալում է Մ. Նահանգների օժանդակությունը:

Գործարկվեց Բաքու-Ջեյհան նավթամուղի վրացական հատվածը

Երեկ կեսօրին Վրաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահների մասնակցությամբ տեղի է ունեցել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի վրացական հատվածի բացման արարողությունը: Նախագահ Միխայիլ Սաակաշվիլին, ըստ «Նովոստի» գործակալության, ընդգծել է, որ նավթատարը Վրաստանի համար առաջին հերթին ունի քաղաքական նշանակություն: «Աշխարհի քաղաքական քարտեզի վրա Վրաստանի նշանակությունն աճում է: Հաջորդ տարի մենք կունենանք գազատար (Բաքու-Թբիլիսի-Էրզրում), որը նույնպես նշանակում է Վրաստանի տնտեսական եւ էներգետիկ իրական անկախություն», ասել է Սաակաշվիլին:

Եվրամիությունը չի պատշտպանում Կարս-Ախալքալաք երկաթգծի նախագիծը

ԹԱԹՈՒԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Եվրամիությունը չի պատշտպանում Կարս-Ախալքալաք երկաթգծի նախագիծը եւ դա համարում է անարդյունավետ»: Այս մասին երեկ Բրյուսելում «Մեդիամախի» թղթակցին տված հարցազրույցում ասել է Եվրահանձնաժողովի (ԵՄ գործադիր մարմինն է-խմբ.) տրանսպորտի եւ էներգետիկայի գլխավոր տնօրենության ներկայացուցիչը, որը խոսել է իր անունը չբացահայտելու պայմանով: Նա հայտարարել է, որ ԵՄ-ն առավել արդյունավետ է համարում Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթգիծը, որը տեղավորվում է ՏՐԱՍԵԿԱ նախագծի շրջանակներում:

«Ադրբեջանը եւ Թուրքիան ՏՐԱՍԵԿԱ-ի մասնակիցներ են, եւ մենք տեղեկացրել ենք այդ երկրներին մեր դիրքորոշման մասին», ասել է ԵՀ ներկայացուցիչը, հավելելով, որ ԵՀ-ն պատշտպանական նամակ է ստացել Հայաստանից, որում հայկական կողմը հայտարարել է Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթգծով անցնող տարանցիկ բեռներն առանց իր տարածքում կանգառի բաց թողնելու պատրաստակամության մասին: «Հայկական կողմի այս առաջարկությունը լուրջ հույսեր է ներշնչում», ասել է նա:

«Ազգը» սեպտեմբերի 8-ի համարում տպագրել էր Հայաստանի արտգործնախարարի նամակը ԵՀ փոխնախագահ, տրանսպորտի հարցով հանձնակատար Ժակ Բարրոյին՝ շարադրելով Հայաստանի դիրքորոշումը Կարս-Ախալքալաք երկաթուղու առնչությամբ:

Տես էջ 3

Բուզանդի բնակիչները պաշտպանում են կալանավորված փաստաբան Վահե Գրիգորյանին

«Ռայթ իրավաբանական խումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահե Գրիգորյանին նախորդ գիշեր կալանավորելու լուրը ծայրահեղ հուսահատության եզրին է հասցրել Բուզանդի փողոցի բնակիչներին, հատկապես Սաֆյանների, Դանիելյանների, Գրիգորյանների եւ Վահանյանների ընտանիքներին, որոնց շահերն արդեն մեկ տարի նա պաշտպանում էր դատական ատյաններում: «Փաստաբան Վահե Գրիգորյանի հետ համատեղ դիմակայել ենք բոլոր դատական ատյաններում կատարվող պոռիությունների, հակասահմանադրական ու հակամարդկային որոշումների: Չենք ընկճվել ու շարունակել ենք մեր պայքարը բոնությամբ մեր տներից վտարվելուց հետո: Մեր դիրքորոշումը չի փոխվել, եւ արժանապատիվ պայքարելու մեր համառությունը չի կոտրվելու: Անգամ փաստաբան Վահե Գրիգորյանին կալանքի միջոցով մեկուսացնելու ձեր «կագեբեական» մեթոդը չի հնազանդեցնի մեր կամքը պայքարելու ձեր նյութապաշտական ցանկությունների դեմ: Մենք պահանջում ենք ազատել փաստաբան Վահե Գրիգորյանին», ասված է նրանց երեկ տարածած հայտարարության մեջ: Ավելորակ փողոցում երեկ հավաքված բնակիչներից ոմանք իսկապես մտահոգված էին, իսկ ոմանք դժվարանում էին խոսել, որովհետեւ նրանց խոսքը վերածվում էր լացի: «Հիմա ո՛չ տուն ունենք, ո՛չ փաստաբան, չգիտենք ի՞նչ ենք անելու, ո՞վ է մեզ օգնելու», ասում էին նրանք:

«Այս տարածքի սեփականատերերը բազմիցս ոտնահարել են բնակիչների տարրական իրավունքները: Վահե Գրիգորյանն այն եզակի փաստաբաններից է, որ մեր շահերը տարբեր ատյաններում պաշտպանել է օրենքի տառին համապատասխան: Մեր վրդովմունքը բնական է, քանի որ այսօր մենք զրկվել ենք մեր վերջին հույսից: Նա 4 ընտանիքների դատապաշտպանն էր եւ արդեն երրորդ գործն էր հասցրել Եվրոդատարան», ասաց Գոհար Գալստյանը:

Սաֆյանների ընտանիքի գործն առաջիններից է, որ փաստաբանն ուղարկել է Եվրոդատարան: «Մեր բոլոր լիազորությունները հանձնել էինք Վահե Գրիգորյանին, մեր վերջին հույսը կապելով նրա հետ: Մենք կասկածներ ունենք, որ մեր տների տեղում նոր շենքեր կառուցող «Գլենդեյլ հիլզի» ՍՊԸ-ի հետեւում կանգնած են բարձրաստիճան պետական գործիչներ, որոնք շահույթ են կորզում ուրիշների անվան տակ: Հիմա էլ նրանք ձերբակալել են մեր իրավաբանին», ասաց Սաշիկ Սաֆյանը:

Բնակիչները համոզված են, որ Վահե Գրիգորյանին ձերբակալելու գլխավոր պատճառներից մեկը Գլխավոր պողոտայի բնակիչների գործն էր, նրանք հիշեցին, թե ինչպես էին մի քանի ամիս առաջ՝ մայիսին, Բուզանդի բնակիչներին վտարելու եկած դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցները ծեծում բնակիչների շահերը պաշտպանող փաստաբանին:

«Ռայթ իրավաբանական խումբ» ՍՊԸ-ի իրավաբան Կարապետ Բաղալյանը **«Ազգի»** հետ զրույցում նշեց, որ որեւէ փաստաբան այս պահին չի կարող փոխարինել Վահե Գրիգորյանին, քանի որ նա արդեն մեկ տարի բնակիչների կողքին էր եւ լավ գիտեր նրանց գործերի բոլոր մանրամասները: «Ռայթում» շատ են պետական մարմինների օրենքին հակասող ակտերը բողոքարկող գործերը: Համոզված եմ, որ Վահեին ձերբակալելու հիմնական պատճառը Գլխավոր պողոտայի բնակիչների գործն է», ասաց նա:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ավանդները կվերադարձվեն...

1-ին էջից

Պետք է համադրվեն նպաստառուների եւ ավանդատուների ցուցակները եւ ընտրվեն 70-ից բարձր տարիքի թերերը, միայնակ թոշակառուները, Հայրենական պատերազմում զոհվածների եւ նրանց հավասարեցված անձանց, զոհված ազատամարտիկների ընտանիքները, վիրավորված ազատամարտիկները եւ այլն:

«Թիվը դեռ չունենք, դրա համար որոշեցինք կառավարությանը կես տարի ժամանակ տալ՝ մինչեւ երկու բազաները համադրենք ու ստեղծենք նոր բազա, որից հետո կորոշվեն նպաստառուների թիվն ու փոխհատուցման համաչափությունը: Կառավարությունն այդ գործընթացը կազմակերպելու կարգ կմշակի, կնշանակի լիազոր մարմին: Միաժամանակ կառավարությունը 2007-2009 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում արդեն որոշակի գումար կնախատեսի, քանի որ բազան արդեն հայտնի կլինի: Մենք չենք ենթադրում, որ մեկ-երկու տարում հնարավոր է դա անել, բայց կառավարությունը պարտավորություն է վերցնում նպաստառուների ցուցակում ներառված ավանդատուների վերադարձման խնդիրն իր գործունեության ժամանակահատվածում լուծել, որքան հնարավոր է», ասաց վարչապետը:

Ըստ վարչապետի՝ ԱԺ նոր քառորդում արդեն հարկ չի լինի ավանդների վերաբերյալ օրենք ընդունել:

Վարչապետը նաեւ հիշեցրեց հետխորհրդային մյուս երկրների փորձը, որոնցից ոչ մեկում ավանդների համընդհանուր վերադարձի փորձ չկա. Ռուսաստանում եւս 70-ից բարձր տարիքի ավանդատուներին են փոխհատուցում տվել: «Այս գործում ամենակարեւորը բազայի ստեղծումն է, որը հնարավորություն ունի ապագա չարաշահումների համար. հարկավոր է, որ շատ հստակ հսկողություն լինի, ցուցակներում ուռճացում չլինի, կառուցողական մեխանիզմներ ձեւավորել եւ մի հստակ գիծ քաշել՝ ո՞ր թվականից, ո՞ր ամսից: Մենք պետք է փորձենք, որ գոնե այդ փոքր գումարները (1 մլրդ դրամը- Մ. Խ.) չփոշիանան, չփորձեն զբաղվել դրամաշորթությամբ, կոռուպցիայով կամ կաշառքի միջոցով վերաբաշխումներ կատարել»:

Այդպիսով, ըստ վարչապետ Ա. Մարգարյանի, ավանդների մասնակի փոխհատուցման տարբերակն է ընտրվել, ինչպես մյուս հետխորհրդային երկրներում, եւ Հայաստանը չէ, որ պետք է բացառություն կազմի եւ այնպիսի մոտեցում հանդես բերի, որ ոչ մի տեղ չի ընդունվել: Իսկ կընդունե՞ն այս տարբերակն այն ուժերը, որոնք կուզենային ԱԺ լիագումար նիստերում մանրամասն շոտումոտ տալ հարցը՝ պարզ կլինի արդեն մոտակա օրերին:

Նաեւ՝ կընդունե՞ն այս մոտեցումը 2 միլիոնից ավելի ավանդատուները:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանը հետաքրքրում է աշխարհին իր եզակի մշակույթի եզակի ներկայացմամբ

Եզակի հաջողությունների են հասել տեղեկատվական տեխնոլոգիաների հայաստանյան բնագավառի ներկայացուցիչները: Երեկ արդեն տեղեկացրել էինք, որ նոյեմբերին Թունիսում կայանալիք Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովին կմասնակցի նաեւ հայաստանյան պատվիրակությունը՝ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորությամբ: Երեկ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հանրային տեղեկատվության վարչության ղեկավար Վալերի Տկաչուկը եւ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գարեգին Չուգասզյանը հանդիպեցին լրագրողների հետ եւ ներկայացրին գագաթաժողովի մանրամասները:

ՄԱԿ-ի նախաձեռնությամբ եւ Միջազգային հեռահաղորդակցության միության անմիջական կազմակերպմամբ այս միջոցառման եզրափակիչ՝ երկրորդ փուլին կմասնակցեն ամռանը Հայաստանում տեղի ունեցած էլեկտրոնային բովանդակության «Մաշտոց-1600» համահայկական մրցույթի 8 անվանակարգերում հաղթող ճանաչված աշխատանքները: Գարեգին Չուգասզյանը տեղեկացրեց, որ միջազգային ժյուրին Հայաստանի ներկայացրած 8 աշխատանքներից 4-ը ճանաչել է այս տարվա լավագույն տասնյակում: Բացի այդ՝ 2005-ի աշխարհի լավագույն մշակութային CD/DVD անվանակարգում հաղթող է ճանաչվել հայկական աշխատանքը՝ «Արամ Խաչատրյան. կյանքը եւ ստեղծագործությունը», իսկ «էլ-կրթություն» անվանակարգի հատուկ դիպլոմի է արժանացել «Հայոց մեծ եղեռն. 1915-1923» սկավառակը: Հայաստանյան եւս երկու գործ տեղ են գտել աշխարհի լավագույն գործերի տասնյակում՝ Գ. Մարգարյանի www.doctor.am ինտերնետային էջը «էլ-առողջապահություն» անվանակարգում եւ «ՆԱՏԿ» ընկերության www.edram.am էջը՝ «էլ-բիզնես» անվանակարգում: Գարեգին Չուգասզյանի գնահատականով՝ սա բավականին բարձր ցուցանիշ է Հայաստանի պես փոքր երկրի համար: Հիշեցնենք, որ 2003-ին Ժնետում կայացած գագաթաժողովին հաղթանակի էր արժանացել հայաստանյան միայն 1 աշխատանք:

«Արամ Խաչատրյան. կյանքը եւ ստեղծագործությունը» եռալեզու ձայնասկավառակը ներկայացնում է համաշխարհային հռչակ վայելող կոմպոզիտորի ամբողջական կերպարը՝ կյանքի տարբեր փուլերի լուսանկարներով, հուշերով, նամակներով, ստեղծագործություններով:

Մեծ եղեռնի 90-ամյակին նվիրված սկավառակում ներկայացված փաստաթղթերը, լուսանկարները, արխիվային այլ՝ նույնիսկ դեռեւս չհրապարակված բազմաթիվ նյութեր ոչ միայն 1915-23 թթ.-ին են վերաբերում, այլեւ ներկայացնում են 1878-1965 թթ. պատմությունը: Լուսանկարներում Արեւմտյան Հայաստանի տարբեր խավերի ներկայացուցիչներ են, ողբերգական պատմությունը փաստող լուսանկարներ, հայկական դիմադրության օրինակներ, վերապրողներ: Հատուկ ուշադրության են արժանի 1915-ին «Նյու Յորք թայմսում» հայերին եւ Արեւմտյան Հայաստանին վերաբերող բոլոր հոդվածների հավաքածուն, տարբեր երկրների ականատեսների վկայությունները եւ այլն:

«Ազգի» այն հարցին, թե որքանով են այս աշխատանքները մրցունակ շուկայում եւ որքանով են վերադարձնում ներդրումները՝ Գարեգին Չուգասզյանն ասաց. «Արանք մշակութային աշխատանքներ են եւ շուկայում տեղ գտնելու համար դեռ բավականին ճանապարհ պիտի անցնեն: Բայց պետք է նաեւ նշեմ, որ վերջին շրջանում ողջ աշխարհում մշակութային այսպիսի արժեքների պահանջարկը ահռելի չափերի է հասել, մշակութային արտադրությունը Միացյալ Թագավորությունում ողջ տնտեսության մոտ 10 տոկոսն է կազմում: Մեր նման երկիրը, որ ունի շատ հարուստ մշակութային ժառանգություն, չափազանց հետաքրքրական հնարավորություն ունի մեր մշակութային արտադրությունը զարգացնելու: Հայկական 4 գործերի հաջողությունը փաստում է, որ իրականում մեր աշխատանքը հետաքրքրում է աշխարհին»: Նա տեղեկացրեց, որ Արամ Խաչատրյանին եւ Մեծ եղեռնին վերաբերող սկավառակները հոկտեմբերի 19-23-ը կմասնակցեն Ֆրանկֆուրտում կայանալիք գրքի միջազգային ցուցահանդեսին:

Հաղթանակի արժեքն առավել ակնհայտ է դառնում համեմատության մեջ: Այս տարի Ադրբեջանի ներկայացրած «Հայկական տեսք» սկավառակը միջազգային ժյուրին մերժել է առաջին իսկ փուլում, ոչ մի մրցանակի չարժանացած այս երկրի կողքին են Գերմանիան, Իտալիան, իսկ Հայաստանը 2-րդ անգամ մրցանակ ստացող 14 մեծ եւ հարուստ երկրների կողքին է:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

«Արդարություն» խմբակցության քարոզչության համակարգող մարմինը ստեղծված է

Ղեկավարությունն էլ վստահվել է Վիկտոր Դալլաքյանին

Ընդդիմության եւ ՀՀՇ փոխադարձ գնահատականները, պարզվում է, համարժեք են: ԱԺՄ ղեկավար Վազգեն Մանուկյանը գտնում է. «Պարտադիր չէ ամեն գնահատականի անդրադառնալ, բայց եթե այսպես գնա՝ Հայաստանն է իրեն սպառելու»: «Արդարություն» խմբակցության քարտուղար Վիկտոր Դալլաքյանը պատասխանը բանաձեւեց. «Սպառված մարդկանց մասին չեմ կարծում, թե պետք է մեկնաբանություններ տամ»: ՀՀՇ մի քանի գործիչներ ընդդիմությանը սպառված են համարել ավելի վաղ:

Իսկ ընդդիմությունը սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն մերժելու միակամություն ունի: Դա փաստեց Ալբերտ Բազեյանը երեկ կայացած «Արդարություն» դաշինքի նիստից հետո: Նրա հավաստմամբ, տարաձայնությունը միայն ձեւի մեջ է, եւ երեկ նիստում կարծիքներն ավելի հակված են եղել ակտիվորեն մասնակցելուն եւ «ոչը» արձանագրելուն, քան բոյկոտելուն: Իսկ նիստի քննարկումների արդյունքը կլինի «Արդարության» եւ Ազգային միաբանության համատեղ հայտարարությունը, որի տեքստը դեռեւս պետք է ճշտվի ԱՄ ղեկավարի հետ: Բայց արդեն հստակ է, որ լինելու է ռեժիմին «ոչ» ասելու կոչ ժողովրդին:

Նիստում որոշվել է նաեւ ստեղծել համակարգող մարմին, որի ղեկավարությունը հանձնվել է Վիկտոր Դալլաքյանին, ում տեղեկացմամբ համակարգող մարմինն աշխատելու է երկու՝ ժողովրդի հանդիպումներ եւ քարոզչական աշխատանք իրականացնելու եւ հանձնաժողովներ, անդամների ու դիտորդների հանրաքվեի հետ կապված գործունեությունը համակարգելու ուղղությամբ: «Արդարություն» խմբակցությունն արդեն հոկտեմբերի 18-19-ը հանդիպումներ կունենա հայաստանյան դաշնակների հետ եւ պլանավորում հանդիպումներին մասնակիցներ դարձնել նաեւ այլ կուսակցությունների ներկայացուցիչների: Դալլաքյանի վստահեցմամբ, ընդդիմության քարոզչական գործունեությունը չի կարելի անվանել հակաքարոզչական. «Մենք քարոզչություն ենք իրականացնում «ոչ» ասել ռեժիմին»: Համակարգող մարմնի ղեկավարի տեղեկացմամբ՝ նոյեմբերի կեսերին կլինի կոնկրետ հանրաքվեի օրն ընդդիմության գործարքի տակտիկայի մասին հայտարարություն:

Իսկ թե որտեղից են հայթայթվելու միջոցները՝ հստակորեն չի պարզաբանվում, քանի որ ինչպես բացատրեց Վազգեն Մանուկյանը. «Հայաստանի ֆինանսական աշխարհն մենաշնորհված է: Կուսակցությունները մի չնչին գումար ստանում են պետությունից որպես խմբակցություն, մնացածն այս կամ այն ձեւով հայթայթում են գործարարից թե ինչից՝ բացահայտելի չէ, քանի որ ապրելու այդ գործարարը կընկնի հարվածի տակ: Իսկ իշխանությունը գումարները թալանի արդյունք են»:

Ն.

Հայաստանը հետաքրքրում է աշխարհին իր եզակի մշակույթի եզակի ներկայացմամբ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 52163
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 52922
Լրագրողների սենյակ / հեռ. 58184
Համակարգչ. ծառայություն / հեռ. 58248
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 52935
Հանրակրթական շաբաթաթերթ
«Ազգ» թերթի
Թերթի նիստերի ամբողջական թե մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսության թեմբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խստիվ արգելվում է համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիստերը չեն գրախոստվում ու չեն վերադարձվում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Հայաստանի եւ Ռուսաստանի տնտեսական կապերի խորացման միակ խոչընդոտը տրանսպորտային խնդիրներն են

Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությամբ բացվեց ռուս-հայկական գործարար համաժողովը

Երեկ բացված ռուս-հայկական գործարար համաժողովը բավական ներկայացուցչական էր: Համաժողովին մասնակցում էին ոչ միայն ռուսական կամ հայկական գործարար շրջանակների ներկայացուցիչներ, այլեւ ռուս-հայկական միջկառավարական հանձնաժողովի համանախագահներ՝ Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը եւ Ռուսաստանի տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինը:

Բացելով համաժողովը, հանձնաժողովի հայկական կողմի համանախագահ **Սերժ Սարգսյանը** նշեց, որ վերջին 5 տարում նկատվում են երկու երկրների տնտեսական համագործակցության աճխուժացում եւ ներդրումների աճ: Աղրանքաշրջանառությունն այս տարվա առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 30 տոկոսով: Տնտեսական հարաբերությունների զարգացման միակ խոչընդոտող հանգամանքը փոխադրումների խնդիրն է: Սերժ Սարգսյանն առաջարկեց համաժողովի մասնակիցներին ճնշարկել Փոթի-Պոտի Կավկազ լաստանավային անցման կանոնավոր գործունեության հարցը, քանի որ դրա կանոնավոր չգործելու պատճառը առեւտրային բեռների բացակայությունն է: Միաժամանակ հանձնաժողովի հայաստանյան համանախագահը նշեց, որ աճխուժացել է Հայաստանի եւ Ռուսաստանի մարզերի համագործակցությունը: Բացի այդ, Երեւանում սկսվել է Մոսկվայի տան շինարարությունը, իսկ առաջիկայում Հայաստանի մայրաքաղաքում նման տուն բացելու մտադրություն ունի նաեւ Սանկտ Պետերբուրգը:

Ռուսաստանի տրանսպորտի նախարար **Իգոր Լեւիտինը** նույնպես անդրադարձավ լաստանավային անցման խնդրին եւ գործարարներին կոչ արեց ակտիվորեն օգտվել այդ անցուղուց: Միաժամանակ նա պատրաստակամություն հայտնեց վերանայելու լաստանավից օգտվելու պայմանները, եթե գործարարները դրանք համարում են ոչ նպաստավոր:

Հայաստանին առավել հետաքրքրող աբխազական երկաթուղու վերագործարկման հեռանկարների մասին հարցի կապակցությամբ Իգոր Լեւիտինը հայտնեց, որ մի քանի օրից երկաթուղու ներկայիս վիճակը եւ վերականգնման համար անհրաժեշտ հանգամանքներն ուսումնասիրող ռուս-վրաց-աբխազական հանձնաժողովը կներկայացնի իր եզրակացությունները: Տրանսպորտի նախարարը, կարեւորելով այս երկաթուղու գործունեությունը, առաջարկեց կոնսորցիում ստեղծել այն վերականգնելու եւ շահագործելու նպատակով: Պատասխանելով լրագրողների հարցերին, նա նաեւ ասաց, որ վրացական կողմը նույնպես ցույց է տալիս, որ ցանկանում է մասնակցել երկաթուղու շինարարությանը: Իգոր Լեւիտինի կարծիքով, ճիշտ կլինի վրաց փախստականների Աբխազիա վերադարձի հարցը չկապել երկաթուղու շինարարության հետ, այլ հարցը լուծել երկաթուղու շինարարությանը զուգահեռ:

Համաժողովին մասնակցող Կրասնոդարի երկրամասի նահանգապետ **Ալեքսանդր Տկաչովն** իր ելույթում մատնանշեց, որ երբոր անգամ լինելով Հայաստանում, բավականին աճխուժություն է նկատում բիզնեսում, ինչն արտացոլվում է նաեւ առօրյա կյանքում: Այս առումով նա այն կարծիքը հայտնեց, որ Ռուսաստանը Հայաստանից կարող է սովորել: Ինչ վերաբերում է Կրասնոդարի երկրամասի եւ Հայաստանի առեւտրատնտեսական հարաբերություններին, ապա դրանք նույնպես զարգանում են: Աղրանքաշրջանառությունը կողմերի միջեւ տարեկան ավելանում է 50 տոկոսով:

Կրասնոդարի երկրամասի նահանգապետը հայտնեց, որ երկրամասի 5 մլն բնակչությունից 250 հազարը հայեր են: Փաստորեն ռուսներից հետո հայերը երկրորդն են, իսկ ուկրաինացիները թվով երկրամասում երրորդն են: Դա պատմական վիճակագրությունն է: Ըստ ոչ պատմական վիճակագրության, երկրամասում բնակվում են եւս մոտ 100 հազար հայեր, այդ թվում միգրացիոն օրենքները խախտելով, ինչը Ալեքսանդր Տկաչովը անընդունելի համարեց:

Հայաստանի տնտեսական վիճակը մասնակիցներին ներկայացրեց Զարգացման հայկական գործակալության տնօրեն **Վահագն Մովսիսյանը:**

Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) նախագահ Առա Աբրահամյանի ողջույնը համաժողովի մասնակիցներին փոխանցեց միության ներկայացուցիչ **Վիլեն Հակոբյանը:** Նա մասնավորապես հայտնեց, որ լինելով համաժողովի նախաձեռնողը, Առա Աբրահամյանը հիվանդության պատճառով չկարողացավ մասնակցել դրան: Ելույթ ունեցողը հայտնեց, որ Ռուսաստանի հայերի միության կարծիքով Ռուսաստանը պետք է դառնա Հայաստանի առաջին առեւտրային գործընկերը: Միության անունից նա առաջարկեց, ինչպես Ռուսաստանն է Առա Աբրահամյանի ջանքերով ստեղծել գործարար կապերի զարգացման նոր մեխանիզմներ՝ երկու երկրների գործարարների խորհուրդներ այլ երկրների հետ, այնպես էլ նման կառույց ստեղծել Ռուսաստանի եւ Հայաստանի գործարարների միջեւ: Այս նախաձեռնությունը պատմություն է գտել Ռուսաստանում, իսկ հիմա ակնկալվում է Հայաստանի արձագանքը:

ԱԲՈՒ ՄՈՒՍՏԻՔՈՍՅԱՆ

«Կրասնոդարի երկրամասում այլատյացություն չկա»

Պատասխանելով հայ լրագրողների հարցին, թե ինչպես է երկրամասում պայքար տարվում այլատյացության դեմ, Կրասնոդարի երկրամասի նահանգապետ Ալեքսանդր Տկաչովը պատասխանեց, որ երկրամասում այլատյացություն չկա եւ «ինչ ասում են՝ փչած-ուռճացված է»: Նա հայտնեց, որ մարզում ավելի քան 300 հազար հայ կա, որոնք ներգրավված են բիզնեսում եւ այլ ոլորտներում: «Լավագույն տեղերում ապրում են հայերը՝ Սոչի, Անապա, Գելենջիկ: Ինչ այլատյացության մասին է խոսքը», եզրափակեց նահանգապետը:

Ա. Մ.

«Սինոփսիսը» գնում է HPL ընկերության բաժնետոմսերը

Մեկ տարի առաջ Հայաստանում հաստատված «Սինոփսիս» ընկերությունը երեկ հայտարարեց, որ մինչեւ 2006 թ. առաջին ֆինանսական քառորդ 13 մլն ԱՄՆ դոլարով կգնի HPL ընկերության բաժնետոմսերը՝ յուրաքանչյուր բաժնետոմսի դիմաց վճարելով 0,3 դոլար: «Սինոփսիս Արմենիայում» այսօր աճխատում է 350 ինժեներ եւ ուսանում 150 ուսանող: Այս գործարքով HPL ընկերության մոտ 120 աճխատողներ դառնում են «Սինոփսիսի» ինժեներ: HPL ընկերությունը, որ Հայաստանում հիմնվել է 1995-ին եւ այն ժամանակ արտասահմանյան ընկերություններից հայաստանյան առաջին մասնաճյուղերից էր, ըստ «Սինոփսիս Արմենիայի» գլխավոր տնօրեն Ռիչ Գոլդմանի, այս տարիներին Հայաստանում ստեղծել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կազմակերպությունների գործունեության համար հարմարավետ միջավայր, կառավարության եւ ոլորտի այլ ընկերությունների հետ օրինակելի համագործակցության փորձ կուտակել:

«Սինոփսիս Արմենիայի» գործադիր տնօրեն Հովիկ Մուսայելյանի գնահատմամբ՝ մրցակցային տուկայում նորմալ երեւույթ է, երբ առաջատար մի ընկերություն գնում է մյուսին: Սակայն այս դեպքն առավել կարեւոր է Հայաստանի համար՝ տարածաշրջանային զարգացումների առումով:

«Սինոփսիս» ընկերությունը, որ կիսահաղորդիչների նախագծման բնագավառում առաջատարներից է, կարեւորում է արտադրողականության հետ կապված բացթողումների վերացումը եւ ելքի կառավարումը օպտիմալացնելու միջոցով շահույթի մեծացումը: Այսօր նախագծում-արտադրություն սովորական ցիկլը տեւում է 18-20 ամիս: HPL-ի նոր մոտեցումներն ու կուտակած փորձը թույլ կտան կրճատել այս ժամանակահատվածը: Ռիչ Գոլդմանը հույս ունի, որ այս գործարքով էլ ավելի արդյունավետ կդառնա «Սինոփսիսի» աճխատանքը, քանի որ կօգտագործվեն HPL-ի ստեղծած տեխնոլոգիաները եւ բացառիկ տաղանդ ունեցող թիմը: HPL-ի փոխնախագահ Բրայն Գոլդենը հույս հայտնեց, որ այսպիսով «Սինոփսիսն» աճխարհում կդառնա շատ մրցունակ եւ Հայաստանում նոր աճխատատեղեր կստեղծի:

Ռ. Մ.

Հայկական տոնավաճառը Մոսկվայում ունեցել է 200 հազար այցելու

Ռուսաստանցիներն առավել հետաքրքրված են հայկական պանրով, կաթնամթերքով, չրերով եւ հյութերով

«Մոսկվայում սեպտեմբերի 20-25-ը Պուշկինի հրապարակում տեղի ունեցած հայկական արտադրանքի առաջին բացօթյա տոնավաճառը (ցուցահանդես-վաճառք) մոտ 60 հայաստանյան ընկերությունների մասնակցությամբ շուրջ 200 հազար այցելու ունեցավ», երեկ հրավիրված ասուլիսի ժամանակ տեղեկացրեց Զարգացման հայկական գործակալության գլխավոր տնօրեն Վահագն Մովսիսյանը:

Մոսկվա քաղաքի կառավարության եւ Հայաստանի կառավարության միջեւ առեւտրատնտեսական համագործակցության համաձայնագրի շրջանակներում կազմակերպված այդ միջոցառումը մեծ հետաքրքրություն է առաջացրել, երկու օր շարունակ Մոսկվայի Պուշկինի հրապարակը լիքն է եղել դիոլ-զուռնայի, լավաշ թխելու, անգամ հայաստանյան ջրով ցայտաղբյուրի, փահլեւանների ուղեկցությամբ:

Ըստ Հայ-ռուսական տնտեսական համագործակցության հանձնաժողովի համանախագահ Մ. Նահապետյանի, Մոսկվայի իշխանությունները բավականին աջակցել են հայկական արտադրանքի տոնավաճառի կազմակերպմանը եւ անցկացմանը՝ ընդհուպ հոգալով ծախսերի զգալի մասը: Մասնավորապես Պուշկինի հրապարակը 2 օրով տրամադրվել է անվճար, որեւէ հարկ չի գանձվել տաղավարների տեղակայման համար, անգամ Հայաստանից ժամանած որոշ հյուրերի տրամադրվել է հյուրանոց:

Բացի այդ, նախապես մտահոգություն է եղել խորովածի համար կրակ վառելու, խմիչքների, գազ օգտագործելու եւ տոնավաճառի անցկացման այլ անհրաժեշտ պարագաների դեպքում անվտանգությունն ապահովելու առնչությամբ: Սակայն Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովը բացառություն է արել, եւ անգամ հակահաբեկչական նկատառումներից ելնելով ցուցաբերված զգուշավորությունն ի վերջո հարթվել է, կրակի, գազի օգտագործումը՝ թույլատրվել:

Հետաքրքրական է, որ Մոսկվայի հայության եւ ընդհանրապես ռուսաստանցիների մեջ մեծ հետաքրքրություն են առաջացրել հայկական պանրատեսակները՝ տոնավաճառի սկզբից 1,5 ժամ անց հայկական պանիրներ վաճառող տաղավարները փակվել են՝ մնացած 20 կգ պանիրը պահելով հաջորդ օրը ցուցադրելու համար: Տոնավաճառում հետաքրքրություն են առաջացրել նաեւ հայաստանյան քաղցրավենիքը, չրերի տեսականին, կաթնամթերքը, հյութերը:

Յուրահատուկ պայմաններով ներկայացվել են հայկական 48 տեսակի գինիներ, հետաքրքրություն են առաջացրել ոսկերչական հուշանվերներ արտադրող ընկերությունների արտադրանքը, բացառիկ գոբելենը, հեղինակային կերամիկան, արծաթյա իրերն ու զարդերը, ձեռքի աճխատանքները, նաեւ հայ նկարիչների ստեղծագործությունները:

Նման միջոցառումներ ծրագրվում են ամեն տարի, ավելին՝ անցկացնել Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Երկրորդ տոնավաճառը հավանաբար կանցկացվի Սանկտ Պետերբուրգում՝ դարձյալ ունենալով հայաստանյան արտադրանքի իմիջ ձեւավորելու նպատակ: Ըստ Զարգացման հայկական գործակալության գլխավոր տնօրենի խոսքերի, Հայաստանում արտադրված ապրանքների իմիջը երկու չափանիշ ունի՝ էկոլոգիապես մաքուր եւ բարձրորակ:

Տոնավաճառում հետաքրքրական ցուցանիշներ են հաստատվել: Մասնավորապես տոնավաճառի կազմակերպիչները զարմացել են, որ հայերենի ինքնուսույց գրքի վաճառքի մոտ 80 տոկոսը կազմվել է ի հաշիվ ռուսների: Բացի այդ, այցելուների թիվը՝ մոտ 200 հազար, եւս յուրօրինակ ցուցանիշ է, քանի որ նմանօրինակ տոնավաճառներ կազմակերպել են ԱՊՀ այլ երկրների արտադրողները եւս, սակայն, օրինակ, բելառուսների տոնավաճառ է այցելել մոտ 20 հազար մարդ, ադրբեջանցիներն ունեցել են մոտ 30-35 հազար հյուր, վրացիներն՝ ավելի փոքր:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվրամիությունը չի պատրաստում...

1-ին էջից

Մայիսի 31-ին թվագրված նամակում Վարդան Օսկանյանը մասնավորապես նշել էր. «Տեղեկանալով, որ ներկայում դուք ճնշարկում եք Թուրքիայից Վրաստան նոր երկաթուղի կառուցելու հնարավորությունը, թույլ տվեք ներկայացնել Հայաստանի դիրքորոշումը: Ինչպես գիտեք, գոյություն ունի գործող երկաթգիծ, որը Գյումրիով Կարսը կապում է Թբիլիսիին: Սա անփոխարինելի միջանցք է ԵՄ-ից ֆինանսավորվող ՏՐԱՍԵԿԱ ծրագրում: Այն չի շահագործվել Հայաստանը շրջափակելու Թուրքիայի քաղաքական որոշման պատճառով: Երկաթուղային նոր գիծ կառուցելու ներկայիս որոշումը պահանջում է շատ մեծ դրամական միջոցներ եւ գումար: Ավելին, դա հարում է արդեն տասնամյակ շարունակվող շրջափակման Թուրքիայի քաղաքականությանը: (Հայ-թուրքականը) միակ փակ սահմանն է ամբողջ Եվրոպայում: Հայաստանը բանականությունից հեռու եւ անընդունելի է համարում նման լուծումը: Եթե Հայաստանն է Թուրքիայի համար խնդիրը, ապա Հայաստանը պատրաստ է չօգտվել այդ (Կարս-Գյումրի) երկաթգծից: Եթե Եվրոպան իսկապես ուզում է Կովկասում համագործակցություն, այս (Կարս-Գյումրի) երկաթգծի վերաբացումը լավագույն խթանն է այդ գործընթացի համար: Այդ միջանցքը չշահագործելը կդժվարացնի Եվրոպական հարեւանության քաղաքականության հաջող իրականացումը»:

Կարելի է արձանագրել, որ հայկական կողմի գործադրած ջանքերն արդյունք են տվել: Նկատենք, որ ԵՄ-ն ավելի վաղ խրախուսում եւ հակված էր ֆինանսավորելու Կարս-Ախալքալաք նախագիծը: Եվրահանձնաժողովի տրանսպորտի եւ էներգետիկայի գլխավոր տնօրենության ղեկավար Ֆրանսուա Լամուրեն 2004 թ. նոյեմբերի 15-ին Բաքվում հայտարարել էր, որ ԵՄ-ը շահագրգռված է Կարս-Ախալքալաք երկաթգծի շինարարության իրագործմամբ: «Մենք մանրամասնորեն ուսումնասիրել ենք այդ նախագիծը, որպեսզի հեռագայում կարողանանք ֆինանսավորել: Սակայն բացի ԵՄ միջոցներից, մենք պետք է տեսնենք ֆինանսավորման հնարավոր այլ աղբյուրներ», ասել էր Լամուրեն:

2004 թ. դեկտեմբերի 28-ին Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները Թբիլիսիում ստորագրեցին Կարս-Ախալքալաք երկաթուղու շինարարության համաձայնագիր: 2005 թ. մայիսի 25-ին Բաքվում երեք երկրների նախագահներ Սեզերը, Սաակաշվիլին եւ Ալիեւը հայտարարեցին երեք երկրները Եվրոպային կապող «երկաթուղային միջանցքի» ձեւավորման մասին: Իսկ մի քանի օր առաջ Վրաստանի վարչապետ Զուրաբ Նոդարիդելին, վերադառնալով Թուրքիա կատարած պատմական այցից, հայտարարեց, որ Կարս-Ախալքալաք երկաթուղու շինարարության նախապատրաստական աճխատանքները կավարտվեն եկող տարի: Հայաստանը շրջանցող եւ շրջափակող Կարս-Ախալքալաք երկաթուղու 98-կմ-անոց հատվածը (68-ը Թուրքիայում, 30-ը՝ Վրաստանում), պետք է միացվի գործող Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղուն: Ըստ նախնական հաշվարկների, նոր երկաթուղու կառուցման համար անհրաժեշտ է 400-ից 800 միլիոն դոլար:

Ինչ քայլեր են անհրաժեշտ տեղական արտադրողին աջակցելու համար

Դրանք պետք է ձեռնարկեն կառավարությունն ու նաեւ հենց արտադրողները

Տեղական արտադրողին խրախուսելու քաղաքականությունը, որքան էլ որոշ «լիբերալներ» համարեն անընդունելի ուկայական տնտեսության համար, այսօր պետություններ-ի ազգային շահերի առաջնահերթություններից է: Ամենաուկայական եւ ամենազարգացած երկրներն անգամ ամեն ինչ անում են իրենց արտադրողների համար նոր ուկաներ գրավելու եւ պաշտպանել ձեռք բերելու համար: Հեռուն գնալ պետք չէ: ԱՄՆ-ն ամեն կերպ ձգտում է, որ Իրաքի նավթարդյունահանումն իրականացնեն ամերիկյան ընկերությունները, իսկ Ֆրանսիայում արգելված է էլեկտրաէներգիայի ներմուծումն այլ երկրներից: Եթե նման հզոր երկրներ իրականացնում են այդպիսի քաղաքականություն, ապա փոքր եւ անցման շրջանը չհաղթահարած երկրների համար տեղական արտադրողի պաշտպանության խնդիրը պետք է դառնա ռազմավարական խնդիր:

Հայաստանի համար տեղական արտադրողին աջակցելն առավել կարեւորվում է նկատի ունենալով մեր աշխարհագրական դիրքը եւ ճանապարհների խնդիրը: Սակայն գլխավոր հարցն այն է, թե ինչպես պետք է դա կատարել: Իրականացնել հովանավորչական քաղաքականություն, ներքին ուկայում սահմանել բարձր մաքսատուրքեր ներմուծվող ապրանքների համար, թե՞ ընտրել այլ, ավելի ճկուն տարբերակներ: Առաջինի դեպքում ակնհայտ է, որ որոշ ժամանակ անց կունենանք խորհրդային ժամանակներին բնորոշ փակ տնտեսություն՝ միջազգային ուկայում անմրցունակ տեղական արտադրության ապրանքներով: Բնականաբար հարց է առաջանում՝ ինչպե՞ս վարվել, որպեսզի թե՛ տեղական արտադրանքը մրցունակ լինի, թե՛ ներքին ուկան պաշտպանված:

Ինչպես խրախուսել արտահանումը

Արտահանումը խրախուսելու առաջին անհրաժեշտ քայլն արված է: Արտահանող ընկերություններն ազատված են ավելացված արժեքի հարկից: Սակայն դա անհրաժեշտ, բայց ամենեւին էլ բավարար քայլ չէ: Կառավարության ներկայացուցիչները, հաճախ վկայակոչելով դա, իրենց առաքելությունը տեղական արտադրողին աջակցելու հարցում համարում են ավարտված: Սակայն միջազգային ուկայում մրցունակ ապրանքներ ունենալու համար անհրաժեշտ են այլ քայլեր եւս:

Մեր արտահանման հնարավոր ուկաների ուսումնասիրության ժամանակ որպես հիմնական առաջարկ նշվում է արտահանող ընկերությունների արտաքին ուկայում համատեղ հանդես գալը: Դա հնարավորություն կտա մեծ ուկաներին անհրաժեշտ քանակ ապահովել եւ տրանսպորտային ծախսերն առանձին-առանձին կատարելու փոխարեն համատեղ կատարել ու միջոցներ խնայել: Բնականաբար այս քայլերով նվազում է արտահանվող ապրանքի ինքնարժեքը եւ բարձրանում նրա մրցունակությունը: Տեղական արտադրողներն առ այսօր որեւէ ոլորտում նման քայլեր չեն իրականացնում: Եվ այստեղ մեղադրել միայն իշխանություններին ճիշտ չէ:

Տեղական արտադրողների համար շատ հաճախ անհասանելի է, թե ինչ է կատարվում արտաքին ուկայում, առավել եւս մարկետինգ իրականացնել արտերկրում: Դա մեծ ծախսեր է պահանջում, որը կարող է իրականացվել պետական կամ կիսապետական կառույցների միջոցով, ինչպիսին Զարգացման հայկական գործակալությունն է: Մինչդեռ վերջինիս գործունեության էական արդյունքների մասին խոսել չենք կարող: Համարյա համարժեք միջոցներով ԱՄՆ գյուղատնտեսության մարկետինգի աջակցության հիմա արդեն ավարտված ծրագիրն անհամեմատ մեծ արդյունավետություն ունեցավ՝ նպաստելով Հայաստանի տնտեսության մի ամբողջ ճյուղի՝ գյուղմթերքների վերամշակման արդյունաբերության վերականգնմանն ու արտաքին ուկայում ճանաչվելուն:

Արտահանման աջակցության համար անհրաժեշտ միջոցառումներից պետք է լինի նորագույն սարքավորումների ներմուծման ժամանակ մաքսատուրքերից ազատելը կամ հարկային արտոնություններ սահմանելը: Խոսքը արտադրության համար անհրաժեշտ հումքագծերի եւ այլ սարքավորումների մասին է, որոնք կնպաստեն հայկական ձեռնարկությունների արտադրողականության բարձրացմանը:

Իհարկե, բացի վերոնշյալ օբյեկտիվ քայլերից, բազում են այլ սուբյեկտիվ խնդիրները՝ կապված դատական համակարգի, հարկային եւ հատկապես մաքսային վարչարարության անկատարության եւ այդ մարմինների կոռումպացված լինելու հետ: Գործոններ, որոնք խոչընդոտում են ոչ միայն արտահանմանը, այլեւ տնտեսության զարգացմանն ընդհանրապես:

Սակայն, բացի արտահանողներից, կարեւոր խնդիրներից է նաեւ տեղական ուկայի պաշտպանությունը, այն տեղական արտադրողների պաշտպանությունը, որոնք հիմնականում գործում են ներքին ուկայում:

Ներքին ուկան պետք է պաշտպանված լինի

Արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ ներքին արտադրողների որոշ առումներով պաշտպանված չլինելը պայմանավորված է այստեղ առկա բարձր կենտրոնացվածությամբ, ինչի պատճառով յուրաքանչյուր ոլորտում գործում եւ գներ են թելադրում երկու-երեք ընկերություններ: Ինչի հետեւանքով փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման համար անբարյաց պայմաններ են ստեղծվում, ինչպես նաեւ որակական եւ գնային առումներով տեղական ապրանքները ներմուծվող ապրանքների առջեւ անպաշտպան են դառնում:

Հետեւաբար, պետության առաջնահերթ խնդիրը պետք է լինի փոքր եւ միջին ձեռնարկատիրությանն աջակցելը ոչ թե հայտարարություններով, այլ գերիշխող դիրք ունեցողներից պաշտպանելու միջոցով:

Մյուս կողմից, պետք է լիարժեք գործի «Ներքին ուկայի պաշտպանության մասին» օրենքը: Այն բավականին լուրջ միջոցառումներ է նախատեսում ներքին արտադրողներին պաշտպանելու համար: Մասնավորապես, եթե տեղական արտադրությունը բայբայվում է բացառապես ներմուծվող համարժեք արտադրանքի պատճառով, ապա օրենքը թույլ է տալիս վերջինիս նկատմամբ մինչեւ 15 տոկոս մաքսատուրքեր կիրառել: Անգամ նախատեսված է ներմուծվող համարժեք ապրանքը քվոտավորել: Այսինքն, ներմուծման առավելագույն չափաքանակ սահմանել: Ընդ որում, սա ոչ միայն Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը չհակասող, այլեւ հենց նրա առաջարկով ընդունված օրենք է: Սակայն որքան էլ զարմանալի է, բողոքելով ներմուծման դեմ, տեղական արտադրողները որեւէ կերպ մինչ այժմ չեն դիմել այս օրենքի օգնությանը: Եթե այն լիարժեք չէ, ապա պետք է քայլեր ձեռնարկել եւ լրամշակել, որպեսզի նրա դրույթները կիրառվեն եւ կարողանան պաշտպանել ներքին արտադրողին, իսկ եթե նման խնդիր չկա, ապա տեղական արտադրողները դժգոհելու փոխարեն պետք է օգտվեն այս օրենքի ընձեռած հնարավորություններից: Հետեւաբար, կարող ենք ասել, որ այստեղ նույնպես միայն կառավարությանը մեղադրելը ճիշտ չէ:

Վերջում կցանկանայինք նշել, որ չենք հավակնում մեր թվարկած հանգամանքներն ու անհրաժեշտ միջոցառումներն ամբողջական համարել տեղական արտադրությանն աջակցելու քաղաքականության հարցում, բայց եթե այդ ուղղությամբ տեղաշարժեր լինեն, ապա արդյունքները նկատելի կլինեն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԽՈՐԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ. Եղծ աղանդոց

«Զգուշացի՛ր, աղանդ է» կարգախոսը հիմա արդիական հնչեղություն ունի: Ազգային խնդիրներով մտահոգ յուրաքանչյուր ոք մեծ ցավով է ընդունում աղանդավորների հայտնվելը մեր մեջ եւ նույնիսկ նմանեցնում աղանդավորներին արտում հայտնված որոմի հետ: Փորձենք բացահայտել՝ կոնկրետ ո՞րն է աղանդի վտանգավորությունը: Ընթերցողների հարցերին պատասխանում է Հայ առաքելական եկեղեցու քարոզչական կենտրոնի տնօրեն Ղեւոնդ քհն. Մայիլյանը:

- Տեր հայր, ինչո՞վ է աղանդը տարբերվում ճշմարիտ հավատից եւ ո՞րն է դրա վտանգը, եթե աղանդավորը գոնե առաջին հայացքից բարեպաշտ ու խաղաղ մարդու տպավորություն է թողնում: (Լալա Մարության, Երեւան)

- Նախ նշեմ, որ ճշմարիտ հավատն ու ճշմարիտ եկեղեցին աստվածահիմն ու առաքելահիմն են, ինչպես մեր Հայ առաքելական սուրբ եկեղեցին է: Ճշմարիտ հավատի պահպանն ու երաշխավորը եկեղեցին է: Աղանդավորական շարժումները մեծ մասամբ առաջացել են արեւմուտքում, հիմնականում բողոքական շարժման հետեւանքով: Աղանդը մայր եկեղեցու դավանանքից տարբեր, անգամ հակասող դավանանք ունեցողների խումբն է, որոնք իրենք իրենց հեռացնում են եկեղեցուց: Մայր եկեղեցին երբեք չի փակում հետդարձի ճանապարհը աղանդավորների համար, քանի որ նրանց համարում է մոլորյալ ոչխարներ եւ միշտ պատրաստ է նրանց ընդունելու իր գիրկը:

Որպես կանոն աղանդը մարդու ստեղծած մի կազմակերպություն է, որի ողջ նպատակն է այդ աղանդաստեղծ մահկանացու մարդու հեղինակությունը հակադրել եկեղեցու հեղինակությանը: Հիմնականում այդ հեղինակությունները անսխալականության պատմուճան հագնելով՝ կարողանում են իրենց շուրջը հավաքել մարդկանց, որոնց հետաքրքրությունների շրջանակը ասիճանաբար սեղմելով, նրանց դարձնում են «ոռբոտային» անդամներ՝ պատրաստ կատարելու «լիդերի ամեն մի հրահանգ: Որպեսզի պարզ լինի վտանգի աստիճանը, պատկերացրեք, թե ինչ կպատահի, եթե աղանդավոր հայտնվի, ասենք, Մեծամորի ատոմակայանում կամ պետանվտանգության գաղտնի ծառայությունում եւ կամ հայ-թուրքական սահմանակետում: Իսկ քանի որ բոլոր աղանդներն էլ ներմուծված են, պարզ է, որ դրանք կներկայացնեն նրանց շահերը, ովքեր կցանկանան լուրջ փոփոխություններ տեսնել մեր երկրում: Չխաբվեք արտաքնապես «բարեհամբույր» երեւացող աղանդավորներից, նրանք ավելի գառան մորթի հագած գայլերի են նման:

Փորձեք հայ իրականության մեջ գտնել մի աղանդավորի, որ արժեք ներկայացնի հայ մշակույթի, գիտության եւ ընդհանրապես հայության համար: Չկա եւ չի էլ կարող լինել: Եթե անգամ նման մեկը անցնի էլ աղանդավորների շարքը՝ այդ շնորհը, անմիջապես կկորցնի:

- Ինչո՞ւ հայ առաքելական եկեղեցին չի պայքարում եւ արմատախիլ անում մեր երկրից աղանդներ: Ի՞նչ է, եկեղեցին փող չունի՞, թե՞ պատմական փորձի պակաս ունի (նկատի ունեմ պավլիկյաններին եւ թոնդրակեցիներին վերացնելու պատմական դասերը): (Վ. Ա.)

- Ոչ միայն հայ առաքելական եկեղեցին, այլեւ աշխարհի բոլոր ուղղափառ եկեղեցիները չունեն անհրաժեշտ չափով հոգեւոր սպասավորներ, որ կարողանան բոլորին մատակարարել հոգեւոր սնունդ: Դրանով է բացատրվում աղանդների լայն տարածումը: Եթե յուրաքանչյուր գյուղ կամ համայնք ունենա եկեղեցի եւ հոգեւոր սպասավոր, վիճակն ավելի հուսալի կլինի: Օրինակ, վերջերս ձեռնադրված շատ քահանաներ անցան հոգեւոր ծառայության այնպիսի տեղերում, ուր չկան եկեղեցիներ: Բնականաբար, այդ տեղերում շուտով կկառուցվեն նաեւ եկեղեցիներ: Մեկ գյուղին՝ մեկ քահանա: Այս ծրագիրը իրագործվելուց հետո աղանդավոր ու օտար կրոնական շարժումները անելու բան չեն ունենա մեզանում: Մարդիկ այն տեղերում, ուր չեն ձգտում ճշմարիտ հավատի, այլ իրենց հոգեւոր պահանջները բավարարում են որեւէ աղանդի սարդոսային ընկնելով, աղագա չունեն, դատապարտված են: Կտրվելով հայեցի հիմից՝ այդ շարժումները ծառայում են օտարներին: Հայ առաքելական եկեղեցին ջանում է, որքան ներում են ուժերը:

- Վերջերս շատ եմ հանդիպում տարբեր խոսակցությունների, թե ավետարանական եկեղեցին նույնպես աղանդ է, այդպե՞ս է: (Ժաննա, 50 տարեկան)

- Ավետարանական եկեղեցին բողոքական շարժման արդյունք է եւ ինքնին բոլոր աղանդների «մայրն» է, քանի որ բազմաթիվ ճյուղավորումներ եւ պառակտումներ ունի: Այս եկեղեցուց են դուրս եկել մեզանում առկա գրեթե բոլոր հարանվանությունները՝ բապտիստները, հոգեգալուսականները, 7-րդ օրվա շաբաթականները եւ այլք: Բողոքականությունը հայոց մեջ է թափանցել ընդամենը 150 տարի առաջ՝ Պոլսից, ուր ամերիկյան երկու միսիոներներ հիմնեցին առաջին հայ բողոքականների խումբը՝ թուրք սուլթանի հովանավորությամբ, պառակտելով առեւտահայությանը: Ձեռագիրը նույնն է, ինչպես այսօր, այն ժամանակ էլ բացեցին ձրի հիվանդանոցներ, դպրոցներ, բարեգործական միություններ եւ այլն: Հետեւանքները հայտնի են:

Պատրաստեց Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԸ

Ձեր հարցերը հոգեւորականին կարող եք ուղարկել հետեւյալ հասցեներով՝
Երեւան, Հանրապետության 47, կամ՝ susanik@mail.ru

Հայկական ուսումնասիրությունների միջազգային գիտաժողով Իսպանիայում

Երուսաղեմից խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ սեպտեմբերի 7-9-ն Իսպանիայի Վիթորիա քաղաքում տեղի է ունեցել Հայկական ուսումնասիրությունների միջազգային ասոցիացիայի (ՀՈՒՄԱ) 10-րդ ընդհանուր գիտաժողովը, որին մասնակցել են ավելի քան 60 գիտնականներ աշխարհի տարբեր երկրներից: ՀՈՒՄԱ-ն, որի հիմնադիրներն են եղել 1980 թ. պրոֆեսորներ Մայքլ Սթոսունը (Եբրայական համալսարանից) ու Ջ. Ս. Ռայթենբերգը (Հոլանդիայի Լայդեն համալսարանից), հայկական ուսումնասիրություններով զբաղվող գիտնականների մի կազմակերպություն է, որը գործում է Եվրոպայում: Հիմնադրման առաջարկը պատկանում է դոկտ. Նիրա Սթոունին, իսկ Մայքլ Սթոունը կազմակերպության ցմահ պատվավոր նախագահն է:

Գիտաժողովին Երուսաղեմի եբրայական համալսարանից մասնակցել է Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի ամբողջ աշխատակազմը, այդ թվում՝ Սերջիո Լապորտան, Միքայել Առաքելյանը եւ Նիրա Սթոունը, ինչպես նաեւ համալսարանի նախկին սաներ Փիթեր Քոուին (Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանից) եւ Պաբլո Տոռխիանոն (Մադրիդի Կոմպուտենսիան համալսարանից): Օքսֆորդ համալսարանից ներկա է եղել Գյուլբենկյան հիմնարկության հայագիտության պրոֆեսոր Թեո վան Լինտը:

Գիտաժողովն առիթ է հանդիսացել նոր ծանոթությունների հաստատման եւ համագործակցության՝ նոր ուղիների որոնման տեսակետից:

Հ. Ծ.

Արտերկիր

ԵՄ-ի հետ բանակցությունները զսպաշաղիկ են Թուրքիայի համար

«Նոր հարեւանություն» ծրագրի մաս կազմող Հայաստանը չի կարող հակադրվել դրանց ծավալմանը

Հոկտեմբերի 3-ին Լյուքսեմբուրգում Եվրամիության անդամ երկրների արտգործնախարարների արտակարգ հանդիպմանը բուռն քննարկումներից հետո հաստատվեց բանակցային փաստաթղթերի վերջնական տեքստը, իսկ հոկտեմբերի 4-ի լույս գիշերը պաշտոնապես հայտարարվեց Թուրքիայի հետ բանակցությունների սկզբնավորման մասին: «Ազգը» դեռեւս հոկտեմբերի 5-ի համարում «ԵՄ-ի հետ բանակցությունների սկզբնավորումը Թուրքիայի հաղթանակն է, սակայն դա արդյունքները պայմանավորված են լինելու փաստաթղթերում առկա հոդվածների մեկնաբանությամբ» վերնագրով անդրադարձել էր այդ տեքստին:

Ըստ տեքստի, ԵՄ-ը Թուրքիային որպես նախապայման առաջադրում է Կիպրոսի Հանրապետության եւ Հայոց ցեղասպանության ճանաչումը, բայց ոչ թե բանակցությունների, այլ՝ անդամակցության համար, միաժամանակ պահանջում երկրում բավարարել ազգային փոքրամասնությունների իրավիճակը, թույլ տալ էթնիկ եւ կրոնական փոքրամասնություններին օգտվելու սահմանադրական իրավունքներից՝ ասիճանաբար ընդլայնելով դրանք եւ բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարեւան երկրների հետ:

Ազգային փոքրամասնությունների պարագայում խնդրո առարկան Թուրքիայի հայ, հույն եւ հրեա համայնքներն են, որոնց փոքրամասնության կարգավիճակն ու իրավունքները դեռեւս 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագիրն էր սահմանել: Հետեւաբար հայերի, հույների եւ հրեաների իրավիճակի բարելավում ասելով պետք է հասկանալ նրանց ազգային փոքրամասնության կարգավիճակից բխող իրավունքների վերականգնումը հատկապես համայնքային կալվածքների եւ հոգեւոր ճեմարանների հարցերում, որովհետեւ այդ հարցերի վերաբերյալ կառավարական որոշումները խախտել են պայմանագրի դրույթները:

Ինչ վերաբերում է էթնիկ եւ կրոնական փոքրամասնություններին, թեեւ նրանց մասին Լոզանի պայմանագրում չի հիշատակվում, այսինքն՝ նրանք պայմանագրով փոքրամասնության կարգավիճակ չեն ստացել, սակայն դա չի խանգարել, որ վերջիններս դառնան խստականության թիրախ եւ թուրքական կառավարությունների ճնշումները պատճառ դառնան էթնիկ եւ կրոնական հիմունքներով երկրում նոր հարցերի առաջացմանը, որոնցից գլխավորը տասնամյակների վաղեմություն ունեցող քրդերի եւ ալավիների խնդիրներն են:

Այս խնդիրների կարգավորումն ու ազգային փոքրամասնությունների իրավիճակի բարելավումն, ինչ խոսք, դրականորեն կանդրադառնա Թուրքիայի ներքաղաքական կյանքի վրա՝ նպաստելով համերաշխության մթնոլորտի ստեղծմանը երկրում: Հարեւան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն էլ ինքնաբերաբար կնպաստի տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը: Հարկ է սակայն նշել, որ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը գալով իշխանության, զգալիորեն բարելավել է Թուրքիայի հարաբերություններն Իրանի, առավել եւս Սիրիայի հետ: Չնայած Կիպրոսի հարցում հակասությունների եւ էգեյան խնդրի առկայությանը, Թուրքիան նորմալ հարաբերություններ է պահպանում Հունաստանի հետ:

Այլ կերպ նա, Հայաստանը չհաշված, հարեւանների հետ հարաբերությունների բարելավման խնդիր որպես այդպիսին չունի: Հետեւաբար, Թուրքիային հասցեագրված հարեւան երկրների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ԵՄ-ի պահանջն առաջին հերթին պետք է վերաբերի Հայաստանի հետ հարաբերություններին: Քանի որ շրջափակումն անհարիր է բարիդրացիության սկզբունքներին, ուստի Թուրքիան համանուն հարաբերությունների համար պետք է բացի նաեւ իր հայկական սահմանը:

Թե Թուրքիան ե՞րբ կբարելավի ազգային փոքրամասնությունների իրավիճակը երկրում եւ բարիդրացիական հարաբերություններ կհաստատի հարեւանների հետ, դժվար է ասել: Սակայն քանի դեռ նա անդամակցության բանակցություններ է ծավալում ԵՄ-ի հետ, չի կարող մերժել վերոհիշյալ պահանջները: Սա նշանակում է, որ բանակցությունները յուրատեսակ զսպաշաղիկի դեր են կատարելու Թուրքիայի համար: Եթե նույնիսկ նա չբարելավի պոլսահայ համայնքի վիճակը եւ չվերացնի Հայաստանի շրջափակումը, այդ խնդիրները մշտապես լինելու են նրա օրակարգում, իսկ Հայոց ցեղասպանության ճանաչման ԵՄ-ի նախապայմանը նպաստելու է, որ երկրում ակտիվորեն վերարծարծվի պատմական բեռից ձերբազատվելու խնդիրը:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ պոլսահայ համայնքի համար նախընտրելին ԵՄ-Թուրքիա անդամակցության բանակցությունների ծավալումն է, քան դրանց խզումը: Ակնհայտ է, որ խզման դեպքում Թուրքիան կկանգնի Եվրոպայից օտարվելու սպառնալիքի առջեւ եւ ԵՄ-ի պահանջների հետ հաշվի նստելու հարկադրանքի տակ այլեւս չի լինի:

Չպետք է մոռանալ, որ Հայաստանը 2004 թ. հունիսի 14-ին Վրաստանի եւ Ադրբեջանի հետ միացել է ԵՄ-ի «Նոր հարեւանություն» ծրագրին: Քանի որ Անդրկովկասի աշխարհագրական դիրքն անմիջական հարեւանության հնարավորություն չի տալիս ԵՄ-ին, ուստի ծրագրի իրագործումն անխուսափելիորեն պայմանավորվում է Թուրքիայի միջոցով: Ստեղծված իրավիճակում հարկադրվել ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ծավալմանը, Հայաստանի համար կնշանակի հանդես գալ ծրագրի տարալման նախաձեռնությամբ:

Մոտ ապագայում Հայաստանը ԵՄ-ին անդամակցելու հնարավորություն չունի, ոչ էլ, ըստ երեւույթին, անդամակցության թեկնածու դառնալու: Սակայն եթե Թուրքիան անդամակցի ԵՄ-ին, ապա Հայաստանը սահմանակից կդառնա այդ կառույցին, այդ դեպքում հայ-թուրքական հարաբերությունները զգալիորեն կվերածեն Հայաստան-ԵՄ հարաբերությունների, իսկ դա նախադրյալներ կստեղծի, որ մեր հանրապետությունը նպաստի «Նոր հարեւանություն» ծրագրի իրագործմանը:

ՀԱՐՈՒԹ ՉԱՔԱՐՅԱՆ

«Սթեն» փոթորիկը Գվատեմալայում 2000 զոհ է պատճառել

Կենտրոնական Ամերիկայում վերջին օրերին մոլեգնած «Սթեն» արեւադարձային փոթորիկն ամենից շատ վնասել է Գվատեմալային: Երկրի արեւմուտքում սողանքի ենթարկված Պանաբայ գյուղի 1400 բնակիչները, որոնք դեռ շաբաթավերջին համարվում էին անհետ կորած, երեկ պաշտոնապես ընդգրկվել են զոհերի ցանկում: Ֆրանսպրեսը նշում է, որ արդեն հայտնի 652 զոհերին զոհերի գումարելով՝ ընդհանուր թիվը Գվատեմալայում կանցնի 2000-ից:

Մեքսիկայում փոթորիկը պատճառել է 42, Սալվադորում՝ 72, Նիկարագուայում՝ 11 զոհ: Հարյուր հազարավոր մարդիկ դարձել են անօթեւան: Կարմիր խաչի աշխատակիցները դադարեցրել են որոնողական աշխատանքները Գվատեմալայի Պանաբայ գյուղի շրջանում, որը փակ գոտի է հայտարարված համաճարակների տարածում թույլ չտալու նպատակով:

Զոհերի թիվը Գվատեմալայում վերջնական չէ: Երկրի հարավ-արեւմուտքում գտնվող Սանտո Դոմինգոյի քաղաքապետը երեկ հայտարարեց, որ տարերքի հետեւանքով մեկուսացված այդ շրջանում կան «հարյուրավոր զոհեր եւ անհետ կորածներ»:

Մեքսիկայի նախագահ Վիսենտե Ֆոքսն իր երկրի կրած նյութական կորուստները գնահատում է առնվազն 1,5 մլրդ եվրո: Չիապասի, Օաքսակայի, Վերակրուսի, Գուերերոյի, Հիդալգոյի եւ Պուեբլայի նահանգներում անձրեւների եւ հեղեղումների հետեւանքով տուժել է ավելի քան 2 մլն մարդ:

ՄԱԿ-ում Ֆրանսիայի նախկին դեսպանը ձերբակալված է

Փարիզում երեքշաբթի օրը ձերբակալվել է ՄԱԿ-ի Անխ-ում Ֆրանսիայի նախկին դեսպան Ժան-Բեռնար Մերիմեն: Սինհուա գործակալությունը նշում է, որ 68-ամյա Մերիմեն կասկածվում է ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագրի հետ կապված կաշառակերության մեջ: 1999-2002 թթ. նա միաժամանակ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի եվրոպական հարցերի գծով հատուկ խորհրդականն էր:

«Նավթ պարենի դիմաց» ծրագիրը կիրառվել է 1996 թվականից՝ Իրաքի նկատմամբ ՄԱԿ-ի պատժամիջոցների ներքո: Ըստ ծրագրի, Իրաքը պարեն եւ դեղորայք էր ստանում նավթի մատակարարումների դիմաց: 2003 թ. ծրագրի գործողությունը դադարեցվեց:

Ծրագրի կատարման հանգամանքները քննելով՝ Պոլ Վոլկերի անկախ հանձնաժողովը եզրակացրեց, որ Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնը նավթի գնման պայմանագրեր է շնորհել այն երկրների ընկերություններին, որոնք կողմ էին արտահայտվում ՄԱԿ-ի հակաիրաքյան պատժամիջոցների վերացմանը:

Պարզվել է նաեւ, որ ՄԱԿ-ի աշխատակիցներից շատերը «Նավթ պարենի դիմաց» ծրագիրն օգտագործել են հարստանալու նպատակով: Այսպես՝ 2005 թ. օգոստոսին Նյու Յորքում ձերբակալվեց ՄԱԿ-ի ռուսաստանցի աշխատակից Ալեքսանդր Յակովլեւը, որը հենց ձերբակալման օրը խոստովանեց ծրագրի շրջանակներում իր կատարած խարդախությունները:

Զարքավիի. «Իրաքի օկուպացումը համախմբման պատմական հնարավորություն է»

Ամերիկյան հետախուզության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը «Նյու Յորք թայմսին» տված հարցազրույցում հայտարարել է, որ 2005 թ. ամռանն Իրաքում ամերիկյան զորքերի հայթայթած փաստաթուղթը «համակողմանի պատկերացում է տալիս Իրաքում եւ դրանից դուրս «Ալ Ղաիդայի» ռազմավարության մասին», ինչպես նաեւ թույլ է տալիս պարզել «թշնամու դիտավորությունները»:

Փաստաթղթի հեղինակն «Ալ Ղաիդայի» երկրորդ դեմք Այման ալ Զաուահիրին է: Բուն փաստաթուղթը 6000 բառից կազմված արաբերեն նամակ է եւ հասցեագրված է «Ալ Ղաիդայի» իրաքյան մասնաճյուղի առաջնորդ Աբու Մուսաբ ալ Զարքաուիին: Առաջին անգամ երեքշաբթի օրը հրապարակված նամակում Զաուահիրին հայտարարում է, որ Իրաքի օկուպացումը իսլամիստ գրոհայիններին ընձեռել է բնակչության աջակցությունն ստանալու պատմական հնարավորություն:

Հուլիսի 9-ին գրած նամակում Զաուահիրին ընդգծում է. «Մեր պլանավորումը պետք է կառուցվի պայքարում մահմեդական զանգվածների ներգրավման, նրանց հետ մոջահեդների շարժման մերձեցման վրա եւ ոչ թե նրանցից հեռու պատերազմելու վրա»:

ԱՄՆ ազգային հետախուզության ինտերնետային կայքէջում արաբերեն եւ անգլերեն հրապարակված փաստաթուղթը Աբու Մուսաբ ալ Զարքաուիին ցուցում է տալիս հիշել, որ Իրաքում հակաամերիկյան շարժումն ունի ոչ միայն ռազմական, այլեւ քաղաքական նպատակներ: Ամերիկյան հետախուզության հիշյալ բարձրաստիճան աղբյուրի խոսքերով, նամակի ոճը կասկած չի թողնում, որ հեղինակը եգիպտացի բժիշկ Զաուահիրին է, որն «Ալ Ղաիդայի» գլխավոր ռազմագետն է:

Նամակում խոսվում է նաեւ այն մասին, որ Պակիստանի բանակն իրական վտանգ է ենթադրաբար աֆղանա-պակիստանյան սահմանի մերձակայքում թաքնվող Զաուահիրի եւ Ուսամա բեն Լադենի համար:

Զաուահիրին Զարքաուիին զգուշացնում է, որ չարժե շարունակել ահաբեկչություններն իրաքցի շիա մահմեդականների դեմ: Նամակագրի կարծիքով, «ժողովուրդը չի հասկանում եւ հավանություն չի տալիս նման հարձակումներին»: Ընդհակառակը, օկուպացման պայմաններում հարկավոր է ամեն ջանք գործադրել իրաքցիներին համախմբելու համար:

Չպետք է ամերիկացիներին սթափվելու ժամանակ տալ: Զաուահիրին ընդգծում է, որ Աֆղանստանում 2001 թ. թալիբների արագ պարտության պատճառը նրանց շարժման սահմանափակությունն է, որտեղ ընդգրկված էին հիմնականում Ղանդահարի իսլամիստ ուսանողները:

Բիշքեկի ամերիկյան ռազմակայանը կօգտագործվի «անժամկետ»

Ղրղզստանում գործող ամերիկյան ռազմակայանի օգտագործման շարունակման շուրջը մի քանի ամիս վարված բանակցություններն ի վերջո ավարտվել են: Երեքշաբթի օրը Բիշքեկի օդանավակայանում վայրէջք կատարած ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը նույն օրն ելեք Ղրղզստանի ղեկավարության հետ ստորագրել է համաձայնագիր, որը հակաահաբեկչական կոալիցիայի ուժերին թույլ է տալիս Բիշքեկի «Մանաս» օդանավակայանն օգտագործել առանց ժամանակային սահմանափակման:

Այսպիսով, ամերիկացիներն ստանում են Ղրղզստանում իրենց ռազմակայանի անժամկետ օգտագործման իրավունք: «Վաշինգտոն փոստ» թերթը գրում է, որ «Մանաս» օդանավակայանն այսուհետեւ էլ կօգտագործվի Աֆղանստանում ռազմական գործողություններ ձեռնարկելու եւ մարդասիրական ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ղրղզստանն այժմ ամերիկացիներից հավելյալ վարձ է պահանջում իր տարածքում գտնվող օբյեկտների օգտագործման համար: 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո Ղրղզստանում տեղաբաշխվեցին մոտ 1000 ամերիկացի զինծառայողներ, ըստ Բիշքեկի նախկին կառավարության հետ կնքված համաձայնագրի, ԱՄՆ-ը տարեկան այդ նպատակին հատկացնում էր 40-50 մլն դոլար:

Այսօր Ղրղզստանի նոր իշխանությունները պնդում են, թե վճարումների մեծ մասը յուրացրել է 2005 թ. մարտյան հեղափոխությամբ տապալված նախկին նախագահ Ասկար Ակաեւի ընտանիքը: Ամերիկացիները Բիշքեկ են գործուղել մի խումբ մասնագետների, որոնք ղրղզների հետ քննարկում են անցած տարիներին կատարված վճարումների հարցը:

Երեկ առավոտյան Կոնդոլիզա Ռայսը մեկնել է Աֆղանստան: Քաբուլում տիրող իրավիճակին ծանոթանալուց հետո նա երեկոյան մեկնել է հարեւան Պակիստան, որտեղ նախագահ Փերվեզ Մուշարաֆի հետ քննարկի շաբաթ օրվա աղետալի երկրաշարժից հետո այդ երկրին ամերիկյան եւ միջազգային լրացուցիչ օգնության հատկացման հարցը:

Մեծ Բրիտանիայում բացահայտվել է ընդհատակյա ներգաղթի ցանց

Բրիտանիայի ոստիկանությունն ընդհատակյա ներգաղթի դեմ ծավալած պայքարի շրջանակներում իրականացրել է խոշոր գործողություն: Լոնդոնում եւ Լինոլնշիրում ձերբակալվել են 19 անձինք: BBC-ի տվյալներով, նրանցից ութին կասկածում են, թե Թուրքիայի բազմաթիվ քրդերի օգնել են մուտք գործել Մեծ Բրիտանիա:

Ոստիկանությունը բացահայտել է հանցագործների մի ամբողջ ցանց, որի մասնակիցները վերջին տարիներին Մեծ Բրիտանիա են հասցրել մոտ 200 հազար անօրինական ներգաղթյալների՝ ընդամենը ստանալով մի քանի միլիոն ֆունտ ստեռլինգ: Ներգաղթյալներից յուրաքանչյուրն անօրինական ծառայությունների դիմաց վճարել է 3-5 հազար ֆունտ:

Բրիտանական ոստիկանությունից բացի, գործողությանը մասնակցել են Բելգիայի, Հոլանդիայի, Դանիայի, Իտալիայի եւ Ֆրանսիայի իրավապահ մարմինների աշխատակիցներ: Անցյալում Լոնդոնի ոստիկանությունը չէր մասնակցել ընդհատակյա ներգաղթի դեմ ուղղված նման լայնածավալ գործողությունների:

Եվրոպական ոստիկանության Եվրոպոլի ձեռնարկած ծավալուն քննության շրջանակներում վերջին երկու տարիներին ձերբակալվել էին 20 ուրիշ կասկածյալներ:

Պ. Ք.

Մշակույթ

Պետությունով Հայաստանում տարեկան թարգմանվում է օտարալեզու 6 -7, առավելագույնը՝ 10 գեղարվեստական գիրք: Մշակույթի եւ երիտասարդական հարցերի նախարարության հրատարակչական գործի գործակալության հրատարակչական բաժնի պետ **Սեյրանուհի Գեղամյանից** տեղեկացանք, որ թարգմանությունների գերակշիռ մասը ռուսերենից է, հետո միայն գերմաներենից, ֆրանսերենից, իտալերենից: Անհամեմատ փոքր են անգլերեն թարգմանությունները:

«Նոյյան տապան» գրատան գրքերի բաժնի վարիչ **Հայկ Մկրտչյանն** իր ամենօրյա դիտարկումների հիման վրա նշում է, որ ռուսերեն գեղարվեստական գրքերն առ այսօր բավականին լավ են սպառվում: Ռուսերենին լավ տիրապետող մեր ընթերցող հասարակությանը մատչելի են հասկանալի Պետերբուրգում հրատարկվող «Դասականների այբուբեն», «Ռուսական դասականներ», «Համաշխարհային դասականներ» մատենաշարերով հրատարակված գրքերը, որոնց գինը 1200 դրամից բարձր չէ: Հակառակ դրան, նկատելի դանդաղ, կամ առհասարակ չի վաճառվում հայատառ գրականությունը, որի պատճառը նա բացատրում է հրատարակիչների զգալի մասի գրական կյանքից եւ շուկայից հեռու լինելու հանգամանքով: Իսկ ինչ պահանջարկ ունեն հայատառ թարգմանական գրքերը: «Թարգմանական գրականությունը կարելի է դասել փոքր թե շատ վաճառվողների շարքը, անշուշտ, մանկական գրականությունից հետո: Պետական պատվերով հրատարակված Դոստոեւսկու «Նամակներ մեռյալ տնից» գիրքը՝ Արմեն Հովհաննիսյանի թարգմանությամբ, կարելի է ասել, լավ վաճառվողների թվում է: Ընթերցասեր երիտասարդները շատ են հետաքրքրվում Մարկեսի գրքերով, նրա վերջին գրքերը թեեւ բնագային թարգմանություններ չէին, սակայն վաս չէին սպառվում: Այսօր բարձրորակ թարգմանությունների մեծ պահանջարկ կա, բայց ցավալիորեն գրքի բնագավառ են ներթափանցել գրահրատարակչական գործում սիրողական մակարդակ ունեցող մարդիկ: Մինչդեռ դա լուրջ մասնագիտություն է, որը պահանջում է հմտություն եւ բազմակողմանի գիտելիքներ: Գրաքննության վերացումն, իհարկե, դրական երեւույթ էր, սակայն որոշակի վերահսկողություն անհրաժեշտ է լինի, այլապես դրամ ունեցող ամեն ոք այսօր գիրք է գրում ու հրատարակում թարգմանությունները: Եթե մենք իսկապես ուզում ենք բազմակողմանի զարգացած երիտասարդություն ունենալ, ուրեմն պետք է կարեւոր տեղ հատկացնենք նաեւ թարգմանական գրականությանը: Դրա համար պետք է մտածել պետական ու մասնավոր միջոցները ճիշտ օգտագործելու մասին, այլ ոչ թե զուտ ցուցադրական նպատակով Կոելյոյի կամ մեկ այլ գրողի հայտնի գործը ռուսերենից թարգմանելով ու հրատարակելով գործն ավարտված համարել: Անհրաժեշտ է հատուկ մասնաշարով հրատարակել համաշխարհային արդի գրականության լավագույն գործերը՝ դրանք աղահովելով բարձրորակ թարգմանությամբ ու մատչելի գներով: Ես հրատարակիչներին բանիցս հուշել եմ, որ տպագրական թղթին եւ այլ բաներին կարեւորություն տալով իրենք բարձրացնում են գրքի արժեքը ու մեր ընթերցասեր հասարակությանը զրկում հայատառ գիրք գնելու հաճույքից», ասում է Հայկ Մկրտչյանը:

Թարգմանական գրականության պակասը, ըստ նրա, բարձրորակ թարգմանիչների պակասի հետեւանք է. այսօր գրքեր են թարգմանում օտար լեզուների միջին իմացությամբ թարգմանիչներ: Նա նաեւ նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել պետական աջակցությամբ հայ դասականների լավագույն գործերը հրատարակելու, որպեսզի այսօրվա ուսանողները բուհական եւ պետական քննություններին կարդալու ժամանակ Սասունցի Դավթին չհամարեն Հայրենական պատերազմի հերոս: Հայ դասականների գրքերն արդեն դարձել են հնամաշ ու վաճառվում են միայն Վերնիսաժում:

«Գրքի նկատմամբ մեր հասարակության սերն իրականում չի նվազել, պարզապես գրքի շուկա ներխուժած փողատերերը գրքերի վրա սահմանել են իրենց գրպանին հարմար գներ ու դրանով ընթերցողին հեռացրել գրքից ու նվազեցրել գրախանութների թիվը», հավելում է նա:

Ֆրանսերենից ավելի քան 50 գիրք թարգմանած **Ալեքսանդր Թոփչյանը** նկատում է, որ մասնավոր հրատարակչությունների տպագրած թարգմանական գրականության ընտրությունը կատարվում է պատահական եւ աննպատակ, առանց հաշվի առնելու այդ գրքերի քաղաքական ու մշակութային նշանակությունը: «Ես դրական երեւույթ եմ համարում այն, որ այսօր շատ գրքեր են թարգմանվում, բայց կգերադասեի այդ քանակն առնվազն 50 տոկոսով կրճատված տեսնել, եւ ունենալ որակյալ թարգմանություններ՝ հասցեագրված ներկայիս գրական գրոցեսին: Քանի որ չենք կարող ռուսների ու ամերիկացիների պես այսօր ողջ աշխարհի գրականությունը թարգմանել, ուրեմն ընտրությունը պետք է կատարենք խստիվ եւ հասցեագրված: Նախկինում ժամացույցի մեխանիզմի պես աշխատող այդ համակարգն ամբողջովին փլուզված է, որպեսզի դա ճիշտ աշխատի, պիտի իրենց տեղում լինեն հրատարակիչները, խմբագիրները, թարգմանիչները, քննադատները, որոնք կարողանան կապ հաստատել ընթերցողի հետ եւ նրանից հակադարձ ազդակներ ստանալ: Իսկ այսօրվա վիճակը նման է առանց սլաքների պտույտի աշխատող ժամացույցի: Չեմ ուզում վիճակն ամբողջությամբ սեւ ներկայացնել, այսօր կան ֆրանսերենի հրաշալի թարգմանիչներ՝ Ամալյա Գաբրիելյան, Արուս Բոյաջյան, Աննա Հակոբյան եւ ուրիշներ: Բայց եթե թարգմանությունը չի դառնում ազգային մշակույթի մի նոր տեսակի զարգացման խթան, ուրեմն ինքնանպատակ աշխատանք է», ասում է Ալեքսանդր Թոփչյանը:

Հայաստանի գրողների միության «Արտասահմանյան գրականություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նույնանուն ամսագրի խմբագիր **Սամվել Մկրտչյանը** ներկայիս թարգմանական գրականության վիճակն աղետալի է համարում եւ ոչ մի նախադրյալ չի տեսնում դրա բարելավման համար: «Առանց պետական հոգածության այս ամսագիրը չի կարող գոյատեւել, պետությունը պետք է շահագրգռված լինի, որ թարգմանական գրականությունը ծաղկի, որովհետեւ դա օգտավետ կլինի մեր լեզվին ու գրականությանը, աճող սերնդին, աշխարհի հետ մեր հաղորդակցմանը:

Անցած տարվանից ես եմ ամսագրի խմբագիրը եւ ամենայն պատասխանատվությամբ ասում եմ, որ շատ փոքր օժանդակություն եմ ստացել, ամսագիրը շարունակում է գոյատեւել թարգմանական արվեստի հանդեպ իմ մեծ սիրո շնորհիվ: Եթե վաղը ստիպված լինեմ թողնել ամսագիրը, ամենից շատ ցավում եմ այն երիտասարդ թարգմանիչների համար, որոնց հետ աշխատում եմ: Գրողների միությունն ամսագրին օգնել է մասնակի, վերջին համարն այժմ տպարանում է, եւ դրա համար միությունից ոչ մի գումար չեմ ստացել», ասում է Սամվել Մկրտչյանը: Ընթերցողին համաշխարհային ժամանակակից գրականությանը հաղորդակից դարձնելու նպատակով նա ստեղծել է մատենաշար եւ հրատարակել 4 գրքույկներ, որոնց գինը եղել է ընդամենը 100 դրամ: «Դա շատ հեռանկարային գործ էր, բայց դարձյալ մնաց պետական հովանավորությունից դուրս, եւ երկար չտեւեց: Կարելի է հրաշալի մատենաշարեր ստեղծել, սակայն պետք է լինի առանձին մի կառույց, ենթադրենք Գրողների միությունը, որը պետք է թարգմանական բաժնի համար հատուկ ֆինանսավորում ստանա: Սակայն այն մոտեցումը, որ մեզանում կա լուրջ հարցերի նկատմամբ, դժվար թե որեւէ տեղաշարժ լինի», հուսահատ նշում է Սամվել Մկրտչյանը:



Թարգմանիչների բանակը մեծ է, իսկ բնագրային թարգմանությունները չափազանց փոքր են

Ընթերցասերները գերազանցապես կարդում են ռուսերեն

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԵՂԱՐՎԵՍՏՈՒՄ

Կեսիկյանի ֆիլմի հաջողությունը Ֆրանսիայում

Ֆրանսուա Միտերանի կյանքի վերջին տարիների վերաբերյալ ֆրանսահայ ռանվանի կինոբեմադրիչ Ռոբեր Կեսիկյանի նկարահանած ֆիլմը մեծ հաջողությամբ ցուցադրվում է Ֆրանսիայում: 1981-1995 թթ. երկիրը կառավարած դիրքերի ցուցադրվում է Ֆրանսիայում: 1981-1995 թթ. երկիրը կառավարած ողությամբ

Հաղթական վերջաբան

Հայաստանի ազգային հավաքականն ավարտեց իր ելույթներն աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում: Ավարտական խաղում մեր ֆուտբոլիստները հյուրընկալվել էին Անդորրայի հավաքականին: Ընտրական առաջին խմբի հետնապահների այդ մրցավեճում պետք է որոշվեր, թե հավաքականներից որ մեկը կեզրափակի մրցաշարային աղյուսակը: Հայաստանի հավաքականի կազմում տարբեր պատճառներով բացակայում էին առանցքային մի քանի ֆուտբոլիստներ: Սակայն դա չխանգարեց մեր ընտրանուն հաղթանակով ավարտել մրցաշարը:

Առաջին իսկ րոպեներից հաստատվեց Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Հենկ Վիսմանի այն կանխատեսումը, որ դաշտի տերերն ընտրելու են պաշտպանական խաղաոճ: Դաշտի տերերն առջեւի գծում թողնելով ընդամենը մեկ ֆուտբոլիստի՝ ողջ թիմով նահանջել էին սեփական կիսադաշտ՝ ինքնակամ նախաձեռնությունը հանձնելով մրցակցին: Սակայն ունենալով խաղային եւ տարածքային զգալի առավելություն, հայ ֆուտբոլիստներն առաջին խաղակեսում չկարողացան առանձնապես լուրջ խնդիրներ առաջադրել մրցակցին: Նրանք գործում էին ոչ այնքան բարձր տեմպով, գրոհներն էլ առանձնապես աչքի չէին ընկնում սուրթյամբ եւ բազմազանությամբ: Դա էր պատճառը, որ մինչեւ ընդմիջում ընդամենը 3 շաս թե միջ վտանգավոր պահ ստեղծվեց Անդորրայի հավաքականի դարպասին: Խաղասկզբում վտանգավոր հարված կատարեց Մխիթարյանը եւ դարպասապահի անվստահ խաղից հետո միջ էր մնացել Արա Հակոբյանը գրավեր դարպասը: 24-րդ րոպեին Վալերի Ալեքսանյանը մոտ տարածությունից վրիպեց:

Դժվար է ասել՝ մինչեւ ընդմիջում մեր ֆուտբոլիստներին կհաջողվե՞ր հասնել արդյունքի, եթե 40-րդ րոպեին չսխալվեր Անդորրայի հավաքականի պաշտպանը, որը փորձելով կանխել ձախ թեւից Մելիքյանի փոխանցումը, գնդակն ուղարկեց սեփական դարպասը՝ ապակողմնորոշելով դարպասապահին: Առաջին խաղակեսի ավարտին դաշտի տերերը մնացին 10 հոգով, ինչն ավելի դժվարացրեց նրանց խնդիրը:

Ընդմիջումից հետո մեր ֆուտբոլիստների հարձակողական գործողություններում որոշակի ակտիվություն նկատվեց, ինչի շնորհիվ հաջողվեց երկու անգամ իրացնել գոլային պահերը: Աչքի ընկան Հակոբյան եղբայրները: Ինչ վերաբերում է անդորրացիներին, ապա խաղամակարդակով զգալիորեն մեր ֆուտբոլիստներին զիջող դաշտի տերերը ողջ հանդիպման ընթացքում այդպես էլ չկարողացան լրջորեն սպառնալ Հայաստանի հավաքականի դարպասին: Հիշատակության է արժանի ընդամենը 2 պահ: Մի դեպքում մրցակիցը չհասավ գնդակին, մյուս դրվագում տուգանային հարվածից հետո Կասպարովը հետ մղեց գնդակը:

Այսպիսով, Հայաստանի հավաքականը խոշոր հաշվով հաղթանակով ավարտեց ընտրական մրցաշարը եւ խոպս տվեց վերջին տեղից: Ինչ խոսք, հաղթանակն ուրախալի է, սակայն, եթե անկեղծ լինենք, Հայաստանի հավաքականի ցուցադրած խաղն իրեն զգալիորեն զիջող մրցակցի հետ առանձնապես տպավորություն չթողեց: Այնպես որ, ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցելույթները հնարավոր չէ բավարար համարել:

Ստեփանակերտը Մարկանա էր՝ շախմատային մեծ կրքերի համար

Այսպիսով, շախմատի միջազգային երկրորդ մրցաշարը Ստեփանակերտում կայացավ: Խաղերի ընթացքին համացանցի միջոցով հետեւում էր ավելի քան 70 հազար մարդ, ինչը վկայում է մրցաշարի նկատմամբ մեծ հետաքրքրության մասին: Անշուշտ, այս անգամ էլ Ադրբեջանը փորձեց խանգարել մրցաշարի անցկացմանը՝ համապատասխան խողովակներով իր դժգոհության ձայնը բարձրացնելով: Սակայն, ինչպես ասում են, շախմատը աշխարհագրական ու քաղաքական սահմաններ չի ճանաչում, եւ պետք է արժանին մատուցել բոլոր մասնակիցներին, ովքեր անտեսեցին քաղաքական տաբուները: Ավելին՝ բոլոր մասնակիցների տպավորությամբ մրցաշարը կազմակերպված էր բարձր մակարդակով, խաղացողների համար ստեղծված էին հրաշալի պայմաններ: Նրանց զարմացրել էր նաեւ ստեփանակերտցիների բուռն հետաքրքրությունը մրցախաղերի եւ առհասարակ շախմատի նկատմամբ, որովհետեւ նման մարզական զբաղմունքը սովորաբար հատուկ է մեծ քաղաքներին, որտեղ մարզական ընդգրկումները համապատասխանում են նաեւ ծավալային հնարավորություններին: Յուրօրինակ Մարկանա՝ շախմատային մեծ կրքերի համար. ահա ստեփանակերտյան մրցաշարի բովանդակային գնահատականը:

Իսկ մրցաշարի արդյունքները անսպասելի չէին, թեպետ մրցակիցների կազմում ահեղ հակառակորդների թիվը փոքր չէր՝ միջազգային գրոսմայստերներ Իվանչուկ, Սոկոլով, Դրեեւ, Մաչեյա, Բոլոգան, Առոնյան, Անասասյան, Նակամուրա... Սա շախմատային ասղաբոյլի ամփոփ կազմը չէ, հիշեցնենք, որ նման կարգի մրցաշար առաջին անգամ է կազմակերպվում ամբողջ Կովկասում:

Ինչպես մրցաշարի փակման արարողության ժամանակ որոշակի հուզողության մոտով եւ ոչ առանց հպարտության նշել է ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, հայ գրոսմայստերներն ակասյանը, հայ գրոսմայստերներն ամենեփն էլ «հյուրընկալ» չգտնվեցին: «A» խմբում հաղթող ճանաչվեց Լեւոն Արոնյանը, իսկ «B» խմբում՝ Տիգրան Պետրոսյանը:

Մրցաշարի հանդիսավոր փակման ժամանակ գրոսմայստր Վասիլի Իվանչուկը ելույթ ունենալով՝ գոհունակություն հայտնեց իրենց ընծեռված հրաշալի հնարավորությունների համար, չմոռանալով նշել մրցելույթներին դահլիճում մշտապես ներկա երկրպագուների ծայրահեղ ոգեւորությունը, որը նաեւ խանգարում էր խաղացողներին: Նրա խոսքով՝ առանձնապես խանգարիչ էին բջջային հեռախոսազանգերը դահլիճում: Մեծ հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու պատերազմից ապաքինվող Ղարաբաղին, եւ նրան հիացրել էր ղարաբաղցիների կենսահաստատությունն ու լավատեսությունը, իր սիրտն ու լավատեսությունը, իր իսկ ապագան սեփական ձեռքով կառուցելու նպատակամետությունը:

«A» խմբի գլխավոր մրցավար Յուրի Լոբանովի խոստովանությամբ՝ դա իր կյանքի լավագույն մրցաշարն է, որին ինքը երբեւէ մասնակցել է մրցավարի կարգավիճակով: Նրա դիտարկմամբ՝ բոլոր խաղացողներն էլ ճաշակել են պարտության դառնությունը, իսկ խաղերն էլ եղել են տպավորիչ ու հագեցած:

Մրցաշարի ընթացքում հաճելի անակնկալ էր պատրաստել հյուրի կարգավիճակով Ստեփանակերտում գտնվող հանրաճանաչ շախմատիստ Լայոշ Պորտիշը: Նա Ստեփանակերտի շախմատասեր հասարակության համար համերգ էր կազմակերպել՝ իր բարձրարվեստ կատարումներով: Հանդիսավոր փակման ժամանակ հունգարացի գրոսմայստերը դարձյալ հանդես եկավ օպերային երգերի հրաշալի կատարումներով: ԼՂՀ պետական պարգեւի՝ «Երախտագիտություն» մեդալի արժանացած մեծանուն շախմատիստին մեդալը հանձնելիս ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը հատուկ նշեց, որ նման ջերմեռանդությամբ նա չի երգել աշխարհի ոչ մի բեմում: Ի դեպ, Ղարաբաղում շախմատի զարգացմանը նպաստելու համար նույնպես պետական պարգեւի՝ «Վաչագան Բարեպաշտ» մեդալի արժանացավ նաեւ մրցաշարի համակազմակերպիչ, միջազգային գրոսմայստր Սմբատ Լպուտյանը: Մեդալը անձամբ նրան հանձնեց ԼՂՀ նախագահը:

«Ղարաբաղ-2005» միջազգային մրցաշարի մասին արդեն ֆիլմ է պատրաստվել, որը ցուցադրվեց փակման ժամանակ, եւ որին հաջորդեց արցախյան բեմարվեստի վարպետների պատրաստած համերգը:

Մրցաշարի մասնակիցները մեկնեցին Ղարաբաղից ոչ միայն նվաճած մրցանակներով ու հուշանվերներով, այլեւ մրցաշարից խաղած համոզչականությամբ՝ Արցախում շախմատի միջազգային մրցաշարերը ավանդական են լինելու, եւ իրենք դարձյալ դրանց մասնակիցն են դառնալու: Դա այդպես է լինելու, որովհետեւ շախմատը խաղաղության դեսպանն է, իսկ բազմաչարչար Ղարաբաղին հավերժական խաղաղություն է պետք:

ԳԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Սվիդլերը գրեթե թագադրեց Թոփալովին

Շախմատի աշխարհի առաջնության 12-րդ տուրում կայացավ վճռորոշ նշանակություն ունեցող Թոփալով-Սվիդլեր մրցախաղը: Սպիտակներով խաղացող բուլղարացի գրոսմայստերն իր համար վճռորոշ պարտիան ավարտեց ոչ-ոքի եւ պահպանեց հակառակորդից 1,5 միավորի տարբերությունը: Այսպիսով, կարելի է փաստել, որ Թոփալովը գործնականում նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ավարտական 2 տուրերում Թոփալովին բավական է վաստակել ընդամենը 1 միավոր, եթե, իհարկե, Սվիդլերը միավոր չկորցնի: 12 տուրից հետո Թոփալովի հաշվին գրանցված է 9 միավոր: Վերջին տուրերում նրա մրցակիցներն են լինելու Կասիմջանովն ու Պոլգարը:

12-րդ տուրում գրանցված միակ հաղթանակը տոնեց Անանդը, որը սեւերով պարտության մատնեց Լեկոյին: Վերջնագծի մատույցներում հնդիկ գրոսմայստերը բավական հաջող է հանդես գալիս: Նա վաստակել է 7,5 միավոր եւ Սվիդլերի հետ բաժանում է 2-3-րդ տեղերը: 6 միավորով 4-րդ տեղում է Մորոզեւիչը, որը խաղաղ դաշն կնքեց Պոլգարի հետ: Վերջինիս այդպես էլ չհաջողվեց տղամարդկանց հետ հավասար պայքար մղել: Հուտիթը 3,5 միավորով եզրափակում է աղյուսակը: Նա ընդամենը մեկ հաղթանակ է տոնել՝ առավելության հասնելով Կասիմջանովի նկատմամբ: Աշխարհի ներկայիս չեմպիոնն էլ ոչ-ոքի ավարտեց հանդիպումը Ադամսի հետ:

ՇԱՀՄԱՏ

Գլխավոր մրցանակներն Առոնյանին ու Պետրոսյանին

Ստեփանակերտում վերջնագիծը հասավ շախմատի միջազգային մրցաշարը: Այն անցկացվում է 2 խմբով՝ 10-ական մասնակցով: «A» խմբի մրցաշարը բավական ուժեղ կազմ էր հավաքել եւ ՖԻԴԵ-ի 17-րդ կարգի էր (միջին վարկանիշը՝ 2668): «B» խմբի մրցաշարն էլ 11-րդ կարգի էր (2504), որում եւս հանդես էին գալիս ճանաչված շախմատիստներ:

Խաղարկվող գլխավոր մրցանակները նվաճեցին Լեւոն Արոնյանն ու Տիգրան Պետրոսյանը: «A» խմբի մրցաշարում ավարտական տուրում ուշադրության կենտրոնում գլխավոր մրցանակի հավակնորդներ Արոնյանի եւ Նակամուրայի պարտիան էր: Մրցաշարի հաղթող ճանաչվելու համար Արոնյանին բավարարում էր նաեւ ոչ-ոքի արդյունքը, քանի որ կես միավորով գերազանցում էր մրցակցին: Լեւոնը հասավ իր նպատակին՝ խաղաղ դաշն կնքելով Նակամուրայի հետ: Այսպիսով, վաստակելով 6 միավոր, Լեւոն Արոնյանը դարձավ մրցաշարի հաղթող: Նրանից կես միավորով հետ մնաց ճապոնացի Նակամուրան, որը զբաղեցրեց 3-րդ տեղը: 2-րդ մրցանակակիր դարձավ Ասոն Անասասյանը, որը նույնպես վաստակեց 5,5 միավոր, սակայն Նակամուրային զիջանցեց լրացուցիչ ցուցանիշներով: Վերջին տուրում Անասասյանը խաղաղ դաշն կնքեց Կարեն Ասրյանի հետ: Վերջինս այս մրցաշարում իր հնարավորություններից բավական ցածր հանդես եկավ՝ չճաշակելով հաղթանակի քաղցրությունը: Կարենը 4 միավորով գրավեց 8-րդ տեղը:

9-րդ տուրի բոլոր հանդիպումներում էլ գրանցվեց ոչ-ոքի արդյունք: Հաջողություն կնքեցին նաեւ Դրեեւն ու Բոլոգանը, Իվանչուկն ու Մաչեյան: Ներկայացնենք «A» խմբի մյուս մասնակիցների ցուցանիշները. Սոկոլով՝ 5, Մաչեյա, Բոլոգան, Իվանչուկ՝ 4-ական, Բու, Դրեեւ՝ 3,5-ական: Ինչպես եւ սպասվում էր, «B» խմբում հաղթողի կոչմանն արժանացավ Տիգրան Պետրոսյանը: Այստեղ պայքարը 1-ին տեղի համար ավելի համառ բնույթ կրեց: Պետրոսյանը վերջին տուրում միավորը կիսեց Եղիազարյանի հետ, իսկ ահա նրա գլխավոր հակառակորդներ Սերգեյ Գրիգորյանցն ու Լամին հաղթանակներ տոնեցին համապատասխանաբար Չիբուխչյանի եւ Սվեշնիկովի նկատմամբ: Արդյունքում 3 շախմատիստներ՝ Պետրոսյանը, Գրիգորյանցն ու Լամին վաստակեցին հավասար՝ 6,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով նշված հերթականությամբ էլ լավագույն ելույթը տեղ զբաղեցրեց պատվո պատվանդանին: Տիբիրեկ-Գալստյան պարտիան ավարտվեց ոչ-ոքի, իսկ Լոթեսը հաղթեց Լագնոյին:

Մրցաշարի մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Եղիազարյան՝ 5,5, Գալստյան՝ 5, Տիբիրեկ՝ 4,5, Չիբուխչյան՝ 3,5, Սվեշնիկով՝ 3, Լոթես՝ 2,5, Լագնո՝ 1,5:

«Թալ Գրիգը» դուրս մնաց պայքարից

Բուդապեշտում ընթացող ֆուտզալի չեմպիոնների լիգայի որակավորման 1-ին փուլի ընտրական մրցաշարում Հայաստանի չեմպիոն ու գավաթակիր «Թալ Գրիգը» երկրորդ հանդիպումն անցկացրեց: Հայ ֆուտբոլիստներն ուժերը չափեցին տանտերերի հետ: Ինչպես եւ «Բենֆիկայի» հետ նախորդ խաղում, այս անգամ էլ խաղասկզբում «Թալ Գրիգը» սեփական դարպասը գոլ բաց թողեց: Սակայն հետագայում մեր ֆուտբոլիստները հաշվի մեջ առաջ անցան շնորհիվ Գրիգոր Կարապետյանի եւ Արման Սահակյանի խփած գոլերի:

Ընդմիջումից հետո հունգարացի ֆուտբոլիստներին հաջողվեց տիրել նախաձեռնությանը եւ 2 գոլ խփել (3-2): Ի պատիվ «Թալ Գրիգի», վերջին րոպեին Էմիլ Մեսրոպյանը հավասարեցրեց հաշիվը՝ թիմին փրկելով պարտությունից: Խմբի մյուս խաղում պորտուգալական «Բենֆիկան» 5-0 հաշվով հաղթեց Կիպրոսի «Արարատին»:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Սյունիքի մարզի Շինուար համայնքում «Զանգեզուր-95» ԱԼԿ-ի կողմից շահագործվող «Շինուար» ՓՀԷԿ-ին, Ողջաբեր գետի Շուռ վտակից՝ 400 լ/վրկ ջրառի ցրագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ վերոնշյալ գործունեության նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից վերաբերելի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում գործող «Ախուրյանի ճանապարհների շահագործման եւ շինարարական» ՓԲԸ-ի տեխնիկական նպատակով մակերեսային ջրային օբյեկտից 7,56 լ/վրկ ջրառի ցրագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ վերոնշյալ գործունեության նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից վերաբերելի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Շիրակի մարզի Արեւուտի համայնքում գործող «Մերձմոկովյան» ԲԲԸ-ի տեխնիկական նպատակով մակերեսային ջրային օբյեկտից 6,89 լ/վրկ ջրառի ցրագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ վերոնշյալ գործունեության նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից վերաբերելի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Արարատի մարզի Ջրառատ համայնքի հողի սեփականաշատ Ալեխան Պետրոսյանի՝ ձկնաբուծական նպատակով ստորերկրյա ջրային օբյեկտից 85,0 լ/վրկ ջրառի ցրագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ վերոնշյալ գործունեության նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից վերաբերելի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին համայնքի վարչական տարածքում «Բենզար Էներգի» ՍՊԸ-ի կողմից շահագործվող ՓՀԷԿ-ին՝ Ողջի գետի Ողջ-Ողջ վտակից 520,0 լ/վրկ ջրառի ցրագործման նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից վերաբերելի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 19-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Արարատի մարզի Էջմիածին համայնքի ոչ.ս. ենկարանի տարածքում, հողի սեփականաշատ Վաչագան Քասաբյանի՝ ձկնաբուծության նպատակով ստորերկրյա ջրային օբյեկտից 51,0 լ/վրկ ջրառի ցրագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ վերոնշյալ գործունեության նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային օբյեկտների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից վերաբերելի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ծանուցում

LYCOS

meet you there

TITLE: Developer (m/f) ID No. 4
START DATE/ TIME: as soon as possible
DURATION: Permanent
LOCATION: Yerevan, Armenia

JOB DESCRIPTION: We are looking for motivated technical persons to take over a new position as a Developer. You will belong to a young and dynamic team working with the advertising system and its existing interfaces. You will work on very different projects like customisation of the system, building of complex new interfaces, further development of our reporting tools. During these projects you will also work together with your colleagues in different European countries.

Do you have fun by solving technical problems? Are you able to handle multiple priorities and to approach the issues analytically? Would you like to lead projects and work together with very international teams?

If yes, then you are definitely the right person for this job and we are looking for your application!

JOB RESPONSIBILITIES:

- First of all you will have to learn and understand the AdServing technology (DART Enterprise) and its functionality. You should then understand the surrounding systems and the system architecture as it maps to our business needs.
- You will become an expert in customising and integrating the AdServer software. You will be our expert regarding the architecture and functionality of our AdServer system and will have an excellent understanding of its technical capabilities.
- You will also support the other teams working with the AdServing technology and be their main technical contact for maintenance and new requirements.

REQUIRED QUALIFICATIONS:

- University degree in computer science or a similar education needed
- ASP, VBScript, SQL, MS SQL server are a must.
- PHP, HTML, JavaScript and CSS are a must
- Knowledge in Apache module and in Linux environments would be needed
- Experience in high load systems is a nice to have
- Very good knowledge of written and spoken English
- Pro-active, calm, thorough personality
- Analytically strong, excellent organisational skills
- Be curious, strong understanding of the existing systems

REMUNERATION/ SALARY: Attractive

APPLICATION PROCEDURE: Please send us your CV in English as well as an Application letter answering the 2 questions below to info@lycos-europe.am and state the profile No.4 / AdTech.

Question 1: Please let us know, why you are the right person fulfilling the specific technical demands?

Question 2: Describe the last programming project you have worked on in detail (give us examples). What were your tasks and how did you deliver them?

OPENING DATE: 1st October 2005

APPLICATION DEADLINE: 16th October 2005

ԱՃՈՒՐԴ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Աճուրդի են հանվում գրասենյակային ու բնակարանային կահույք, համակարգիչներ, մեքենաներ եւ այլ ապրանքներ: Աճուրդային վաճառքը կկայանա 2005 թ. հոկտեմբերի 22-ին եւ 23-ին, ժամը 10:00-19:00 ԱՄՆ դեսպանատան պահեստում, որի հասցեն է Չարբախ, Արարատյան 90: Ապրանքները կարող եք զննել ուրբաթ օրը, հոկտեմբերի 21-ին, ժամը 10:00-19:00 եւ շաբաթ օրը՝ հոկտեմբերի 22-ին ժամը 9:00-10:00: Զննումն անվճար է:

Լոտերը վաճառվելու են այնպես, ինչպես կան (ԱՄՆ դեսպանատունը վաճառքի հանված ապրանքների որակի վերաբերյալ երաշխիքներ չի ապահովում): Կիրառվող աճուրդային վաճառքի նոր ձեւը թույլ է տալիս գնել լոտի առանձին իրեր. եթե ուզում եք մահճակալ, ապա կարող եք գնել միայն մահճակալը:

Պահեստ մուտք գործելու համար օգտվեք Շահուրի փողոցի կողմի մուտքից:

Այն ֆիզիկական/իրավաբանական անձինք, ովքեր մասային վճարումներից զերծ գնումներ կատարելու իրավունք չունեն, պարտավոր են ապրանքը գնելուց հետո ՀՀ համապատասխան մարմինների հետ կարգավորել հարկային եւ մասային վճարումների հետ կապված հարցերը:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժին:



ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **ՀՀ Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի հողի սեփականատեր Ալեխսան Դարբինյանի՝** ձկնաբուծության նպատակով սեփական ջրային ռեսուրսից 150,0 լիտր/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 17-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **«Ալեքզի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Լոռու մարզի Նովոսելցովո համայնքի վարչական տարածքում «Տաբիր-1» ՀԷԿ-ի** (կառուցման նպատակով) ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 17-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **ՀՀ Արմավիրի մարզի Ջրառաս համայնքի հողի սեփականատեր Ջեմմա Դամբարճումյանի՝** ձկնաբուծության նպատակով սեփական ջրային ռեսուրսից 85,0 լիտր/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը հոկտեմբերի 11-ի նիստում հաստատեց «Պարտադիր տեղեկացման եւ կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը, ժամկետները եւ հաշվետվական ձեւը»:

Խորհուրդը որոշեց հրատարակել «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամսական պարբերականի 2005 թ. օգոստոս ամսվա համար:

Խորհրդի որոշմամբ արտժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիաներ տրամադրվեցին «Անդակո» ՍՊԸ-ին եւ «Յունայթեդ Ինվեստ» ՍՊԸ-ին, «Վասու» ՍՊԸ-ին թույլատրվեց փոփոխել արտարժույթի փոխանակման կետի գործունեության վայրը, իսկ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու թիվ 497 եւ թիվ 330 լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչվեց:

Խորհրդի որոշմամբ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ին վճարային գործիքների եւ վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի եւ ֆլիրինգի իրականացման լիցենզիա տրամադրվեց:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Կորել է

«Անվարհին» ՍՊԸ ՀԱՀՀ 05011955, 2003 թ. եւ 2004 թ. ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթեր: Գտնողին խնդրում եմ զանգահարել 43-04-99 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱԾՁԲ-05/152 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Հրազդան գետի հունի մաքրում Ղուկասավան, Խաչփար, Դարբնիկ եւ Սայաթ-Նովա համայնքների տարածքներում» աշխատանքների ձեռքբերման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1165 ՀՀ դրամ փոխանցել «Արդիինինվեստբանկ» ՓԲԸ Հ/Հ 247010010343 «Կոմունալախագիծ» ՓԲԸ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանային օրը ժամը 16.00-ն:



Լոտոական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 12.10.2005, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը: